Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1891
U97

1999

1691

ՄԻՐԵՑԻՆ ՊԱՏՄԱԿԱՆԵՑ

(ՊԱՏՄԱԿԱՆԻՆ

(ՅԱՌՈՐԴԱՑ ԿԱՐԻՆԵՑԻՆ)

ԴՐՈՒՍՏԻ ՊԷՍ

ԼԷՍԹ
Ա. Գ Ա. Ր Ա. Դ.

1860

ԹԻՖԼԻՍ

Ի Տպարանի Ազգասիրաց Հրատարակութեան Դրոշակի Հայոց Ընծայելոյ Ազգանուանէ Գէորգայ Ազիզեանց։

43841-4.հ.

Գիրք Ցանկալի
հրատարակեալ Գ. Սրբոյ 1861 տարի
տարեգրեալ 25 դրամ։

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԱՍԻՍ
28086-62
(1681-ա)
ZB 1886

ՄԻՐԱՅԻԼԻ ՊԱՏՄԵՐԵՐՑ

ՊԱՏԱՍԽԱՆԻՆ

ՅԱՅՈՐԱՑ ԿԱՐԻՆԵՐՑ

ԳՐՈՒԱԾՔԻ ԴԻՄ։

«Ս. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ» անուանով լրագրի 1860 թուի 10 և 11 թուահամարներումը տպած է պ. Յակոբայ Կարինեանց կրօնական քննութիւնը էապէս վերնագրով՝ Մ. փոքր խօսք 1859 թուի դեկ. 24 հոյոց ընդհանրական ժողովոյն ներկայացրած ընդունելոյն վրայ։ (1)

Այս գրուածքումը պ. Կարինեանցը իրա քննութեան առակն է գցել։ Թէատրոնական բեմի համար իմ գրած հատուածները (պրեանները) և իրա գրուածքի անունը դըրել է հրէարէ։

---

(1) Արանից յետոյ տպուեցան էս Թէատրոնական հատուածի վրա աղՀատախօսութիւնք երեք նամակաց մէջ յայտնած, մէկը «Կոռոնի հոյոց աշխարհի» օրագրումը Կարդիս ծառայի բերանից, միւսը «Մեղու հոյոցական» լրագրումը Մինհրդատի բերանից, և երրորդը Հայաքիլեան Ադէքսանդրի բերանից։ Ներկայ բացատրութիւնս ցոյց կըտայ նրանց յատկութիւնը։ իսկ նրանց պատասխանը կըգըտնեմ յետոյ։

Լաւ հասկանալու համար, թէ ի՞նչ են նշանակում
նէտ ան, իսկ ի՞նչ բէմէն հատուած բառերը, հարկա-
ւոր եմ համարում ցոյց տալ էս ամէն նրանց իսկական
առաջաբանութիւնը, որ յետոյ կարողանանք դատել, թէ
ի՞նչպէս է հասկանում պ. Կարինեանցը

Ա. Թէ նէտ համար էսպէս է գրում Օտլցը
Հաշակոպէտ գերմանացին. «Թէատրոնական բեմն վրա-
«մէն բան ամէն յայտնի տեսանելի է, ամէն բան կեն-
«դանի ներկայութիւն ունի։ Յանցանք և առաքինու-
«թիւն, երջանկութիւն և թշուառութիւն, յիմարու-
«թիւն և իմաստութիւն հազարաւոր պատկերներով պարզ
«և պայծառ անց են կենում մարդու մօտից։ Ան տեղ
«վէր է ընկնում խարեբայական դիմակը և անկաշառելի
«Ճշմարտութիւնը դատաստան է կարում։ Յանդուգն
«յանցաւորները բանտատեղծու թեան ահեղակարող ձայ-
«նովը դուրս են կանչում հանդէս և կրկնում են իրանց
«ամօթալից կեանքը ապրածների խրատներ տալով ապա-
«գայ օրերին։ Որովհետև աշխարհ ասածը աւելի է ներ-
«պարծում, քան թէ մեռած տարը և տան պատմու-
«թիւնը, ինդուր համար թէատրոնական բեմը աւելի
«խորը և աւելի տեղաւորապէս ներպարծում, քան թէ օ-
«ընդը և բարոյականութիւնը։ Թէատրոնական բեմն է,
«որ մարդկութեան առաջը բռնում է հայելի և նրա
«մէջ ցուցուցէտ կատակներով ցոյց է տալիս յիմարութեան
«հազարաւոր տեսակները։ Մարդկութիւնը պարտաւոր է
«շնորհակալ լինել թէատրոնի բեմից, ըստ որում միայն
«էն տեղ են լսում աշխարհի մեծամեծքը՝ Ճշմարտու-
«թեան ձայնը։ Թէատրոնական հանդէսը էն հասարա-
«կաց զեռաձայն է, որի մէջ ազգի մտածող և աւելի պա-
«տուական մասէցը թափւում է իմաստութեան լոյսը և
«էն տեղից քաղցը շառաւիղներով տարածւում է բոլորի
«մէջ։ Ուրիշ ըմբռնողութիւնները, մաքուր հիմնական

«կանանները, որոնք զգացողութիւնները էին տեղից թափ-
«ուած են ժողովուրդի երակների մէջ։ բարբարոսութիւնը
«խաւարը, մեռապաշտութիւնը մոռացութիւնը, ապիրատութիւնը
«և անկրթութիւնն գիշերը փարատուած են որոց յաղ-
«թող լուսից։ Ֆէոդալական քնեմը անկուած է մեր արքայ-
«ութիւնը մարդասիրութիւն և հեզահոգութիւն»։

Երևանի (1) նոր կոյս ժամանակներս մեր մէջ երևեցաւ
և առաջնակարգ մատենագիրը և կրթիչը էապէս
է գրում, 2) «Ինչի՞ համար ենք գնում թէատրոն,
«ինչի՞ համար էդքան սիրում ենք թէատրոնը։ Ան-
«դար համար, որ նա նորոգում է, զարթեցնում է
«կեանքի շիշկուծ, ցանք և սրտի միջոցներ մերձենում թու-
«նից բարբառած հոգին հզօր և զարմանալի գաղափար-
«ներով։ Ինդար, որ նա ազգերի պէս շարժում
«է մեր կանգնած արիւնը երակների ուրախութիւնով
«և թաց է անում մեր աչքի առաջից նոր, կենդանա-
«նամիտուած և զգացողի աշխարհ կենաց և կրից։ Ֆէ-
«ատոն է խոկալուն տաճար արհեստից, որի մէջ մար-
«նելու ժամանակը մենք բարոյական բաժանում ենք երկ-
«րից, աղաչում ենք կենդանական յարաբերութիւնե-
«րից։ Նոտեղ մեր կեանքով չենք կենում, մեր աղէս-
«նելով չենք առնչում, մեր երջանկութիւնով չենք
«զուարճանում, մեր վաստակի համար չենք գոռում։
«Նրանք ձեզ տանջում են ձեր կեանքի դժուար գործ-

---

(1) Նա երևելի հեղինակի գերազանց գիտութիւնների և մանաւանդ նրա կրթիչի արժանաւորութեան և անհնարին վարմութեան համար տես Современникъ (ժամանակակից) օրագրի 1856 թուի համար XII։

(2) Հեղինակութիւնք Երևանի 1859 թուի համար 1։

«քերի և ձեր կարողութեան սկսարութիւնի վրա մնաց-
«մունքը, դուք էս տեղ կը մոռանաք էդ կենդանաշունչ հոգ-
«սերը։ Թէ ձեր հոգին մէկ օր վիսախադել է սիրոց և
«նրա թմրութեան համար, եթէ ձեր երևակայութիւ-
«նումը մէկ օր թեթև երազի պէս թռել է ձեր աչքի
«առաջից սրան զրուիչ պատկերը, որն որ դուք վա-
«ղուց մոռացել էք, էս տեղ էն վիսախադը կըբարձրանա
«նոր և անսահմանելի զօրութեամբ, էս տեղ էն պատկերը
«նոր մէկանց կընկերակցանայ ձեզ և դուք կըտեսնէք նրա
«աչքերը դէպ 'ի ձեզ դարձուցած սիրութեամբ և սի-
«րով, կըզմայլէք նրա թմրեցուցիչ շնչովը, կըտարա-
«փի՛ք նրա ձեռքի մերձենալուց . . . Բայց կարելի՞ է
«արդեօք նկարագրել թէատրի բոլոր դիւթութիւնները,
«նրա բոլոր մագնիսական զօրութիւնը մարդկային հոգ-
«ւոյ վրա»։

Դարէս են հասկացել և հասկանում թէատրոնի նշանակութիւնը և օգուտները բոլոր Եւրոպայի հին և նոր լուսաւորեալ ազգերը, և էսպիսի Հշմարտութիւնից համոզուելով վաղուց սարքել են ազգային թէատրոններ, ծաղկեցրել են և աւելի ծաղկեցնում են, հարստացրել են և աւելի հարստացնում են և մինչև էս օր կատարելագործում են ամէն մասներովը։ Բայց կոպտաբնակ-ոչ է՝, ըստ որում ամէն ազգի թէատրոնը և նրա բեմի համար գրուած հատուածները իրանց սկզբում իլել են խակ և աւանցել են զանազան թերութիւններ։ Բայց էսպիսի թերութիւններ ունեցող թէատրոնների համար ուշ մէկ մարդ չի ասել ոչ։ Կարինեանցի պէս, թէ կոպտաշնչութիւնը լաւ է, փոն ինչ վատի ընթերը (1)։ այլ ընդ հակառակը ամէն բարեմիտ և Հշմարիտ ազգասէր մարդը

---

(1) Մեղու Հայաստանի 1860 թուի երես 57։

աշխատել է և աշխատում է, որ պակաս թիւնները ուղղուին և թէատրոնը օր ըստ օրէ կատարելագործուի։ Եթէ իմ հատուածները վատ են կամ պակաս թիւններ ունին, դրա համար բարեմիտ մարդը չէ ասիլ, թէ թէատրոնը չբլնի, քանի որում թէատրոնի օգուտները յայտնի են արդէն. ուրեմն էդ ասելը պարզ ցոյց է տալիս թէ ատողը կամ անբարեմիտ մարդ է, կամ բոլորովին չի հասկանում, թէ ինչքան օգտաւէտ է թէատրոնը մարդկութեան համար։

Անցեալ 1859 թուի կիսումը Թիֆլիզումը ծնաւ փոքրիկ պոետին Նէապոլն Հայոց։ Սրա հիմքը դրին էս տեղի հայ ուսանող երիտասարդները, ներկայացնելով «Մէղուհայոսանի» անունով լրագրումը տպած տէր Սուքիասն քահանայի Մանդենեանց հեղինակութիւնը, որ էր խոտակցութիւն Բաբբարէի և Պետրոսի իրանց աղջկան հայերէն ուսուցնելու համար։ Այս չեմ կամենում էս տեղ ընդարձակ խօսել էս լրագրական յօդուածի արժանաւորութեանց վրա, որովհետև իմ ներկայ առարկայից դուրս է, վասն որոյ թողնելով նրա քննութիւնը ուրիշներուն, էսքան միայն յայտնում եմ իմ կարծիքը, որ էն յօդուածը շատ պատուական և ազգաօգուտ նպատակ ունի իրա բովանդակութեան մէջ և շատ մեծ օգուտ բերաւ, պատճառ դառնալով Թիֆլիզոյ Հայոց տնային թէատրոնի հիմնարկութեանը։

Ուրախանալով թէատրոնի մեր քաղաքումը ծագման վրա, ես յանձն առի բոլոր դժուարութիւնները և գրեցի նրա բեմի համար չորս հատուածներ, որք են՝ 1, «Մէջէ ծորդ» կամ «Մոյնոռ» կոմեդիա—վոդեվիլ. 2, «Մէհի դշանած, ծիսոր էին» կոմեդիա—վոդեվիլ. 3, «Պոպոնէ փոյ» դրամա. և 4, «Նրէթ հոպոսած» դրամա, որոնք նոյն ուսանող երիտասարդները անցեալ տարուայ վերջին և էս տարուայ առաջին կիսերումը ներկայացրին ուրն ան-

գում և բոլոր բաղմաթիւ այլեւայլքը մեծ հրճուանքով գո-
վեցին թէատրոնի սկիզբը, շատերաւ և կարելին բարե-
կարգութիւնը և հասուածներից առաջինը, երրորդը և
չորրորդը, իսկ երկրորդի համար միայն մէկ քանի անձինք
շան մարդիկ զանազան կարծիք տանելով և գուցէ ծուռ
հասկանալով՝ զանազան ձայներ հանեցին. այլ թէ մի-
քան ծուռն է էդ տեսակ խօսակցութիւնը դատողութիւնը,
կքննենք էս յօդուածի շարունակութիւնից։

Նապէս սկսուեցաւ Ռ. Ինֆիլեզց՝ այդ առաջին թէատ-
րոնը և կարող է շարունակուել և օր ըստ օրէ կատարե-
լագործուել, եթէ լուսաւորեալ բարեմիտ հայրենիքի ազ-
ատասիրներն և ճշմարիտ ազգասէրները չեն խնայիլ
իրանց գործակցութիւնը և ձեռնտուութիւնը։

Յիշեալ շրջա հասուածներից առաջինը տպած է 1859
թուին, իսկ երկրորդ վերջինները տակաւին տպած չեն։ Պ.
Կարինեանցը գցել է իրա կրիտիկական քննութեան տակ
ինչպէս տպածը, նոյնպէս էլ չտպածներից առաջինը։ Տես-
նենք թէ ի՞նչ տեսակ կրիտիկ է նրա գրածը։ Այդ հասը
համար հարկաւոր է առաջ իմանալ թէ ի՞նչ է կրիտիկը։

Ը. Կրիտիկն (որ է դատողութիւն) է ծայրագոյն սխրա-
գործութիւն ուսումնականութեան, յարմարեցուցումն
կանոնաց, փորձոյ, հանճարոյ և ճաշակի առ ամենա-
տեսակ յօրինուածս։ (1)

Կրիտիկ տասծ բառը պէտք է լինի հրծքի-
մարդոյ, որ յանձն է առնում դատաւոր դառնալ զեղ-
ջարուեստական յօրինուածի, կամ արուեստագործութիւն
ժամանակի սիրապետող կարծիքի, որ է պատուղ անցած
կարծիքների, փորձերի և նկատողութիւնների։ Ա՛ռաջին

---

(1) Դ՛արտաքնութիւն Կաշանակոց, մասն 2, երես 151. (1840 ամի)։

յաւակութիւնքն ևս պէտք է լինին առաջ տանող քայ-
լափոխ, նորոյ թեան գիւտ, գիտութեանց տահմանների
ընդարձակումն կամ բարելաւին փոխարկումն է տահման-
ներին։ Էդ ոգւոյ (ժէնի,) գործ է Նիկիտոյ յատ-
կութիւնքը պէտք է լինի միշտ Աշխարհս թիւն իրա ժա-
մանակի համար։ Սրբումն առաջին տեսակ կրիտիկն է բա-
ցառութիւն ընդհանուր կանոնից, մեծ և հաստատութիւն
երևոյթի. իսկ երկրորդ տեսակ կրիտիկն է Ճիգն պար-
զաբանելոյ և տարածելոյ ժամանակակից տիրապետող հաս-
կացողութեան։

Մեր ժամանակումը երբ որ բանասեղծութեան հիմ-
նական օրէնքները արդէն գտած են, էս է միայնակ նը-
պատակը կրիտիկի, Նեսական ձևով պարզէցնել էդ օր-
էնքները, գործական ձևով ապացուցանել նրանց Ճըշ-
մարտութիւնը, էս է կրիտիկի պաշտօնը։ Նեսութիւնք
(տէօրիա) է կանոնաւոր և ուղիղ միաւորումն օրինաց գե-
զարուեստական յօրինուածների. իսկ կրիտիկը անդադար
շարժում է, առաջ է գնում, հաւաքում է գիտութեան
համար նոր նիւթեր, նոր առարկաներ։

Սխալում են էն մարդիկը, որոնք կրիտիկական տրհեա-
տը համարում են հեշտ և ամէն մարդու համար դիւրա-
մարս, Այս պէտք է բանդակի իրա միջումը թէ խորին
զգացողութիւն, թէ վառուած սէր արհեստի, թէ հաս-
տատուն բաղմակողմանի ուսումն, թէ մաց ընթռնողու-
թիւն, որ է աղբիւր անկողմնատիրութեան, թէ ընդու-
նակութիւն յաղթելոյ կրից։ Այս ոչքան բարձր է պաշ-
տօնը, որ նա յանձն է առնում։ Գատապարտուածի
սխալանքի վրա մարիկ են տալի ինչպէս մեկ տպագրական
բանի վրա, իսկ գատաւորի սխալանքը պատժում են կրկ-
նապատիկ ծաղրածութիւնով։ (1) Ամէն մարդ կարող է

(1) Հիշ. Ռեհ. 1859 թուի մասն 2.

լինել կրիտիկոս, բայց ոչ ամէն մարդ կարող է լինել Աբիատարփա (երկրորդ կրիտիկոս Յունաց)։ Միայն էն մարդը կարող է լինել ճշմարիտ կրիտիկոս, որ իրա, ամէնքին յայտնի, բարոյականութեան քաջութիւնը դերազանցութեամբը և գեղարուեստական ոգեղէն ոգեշունչ ոգեղէնը ստացել է հաստատուն մտերմութիւնը։ Կրիտիկ առելով ոմանք հասկանում են ոչ թէ գոռոզաբանութիւն, այլ հիշումբանք, գոռոզաբարոյութիւն, որ է ծուռը հասկացողութիւն — կրիտիկի ազնիւ նպատակին անարժան։ Իսկ չարաբերզուն առաջը ի՞նչն է կարող ճշմարիտ ընել։ (1)

Ամենայն կրիտիկական քննութիւն, որի առարկան չէ ողջակի գեղարուեստական յօրինուածը, այլ ուրիշ նրա հետ յարակցութիւն ունեցող բան, չէ՛ կրիտիկ, այլ Պոլեմիկ (2) էն էլ եթէ գրած է հանուստ, քաղաքավարի, հանդարտ. իսկ եթէ պարունակում է իրա մէջ կծողական բառեր, կիրք և ուրիշ սրանց նման յատկութիւններ, էն ժամանակը անուն չունի գրականութեան մէջ։

Ա՛չ միայն անանուն տեսակի, այլև պոլեմիկի ժամանակը անց է կենում մեր գրականութեան միջից և միայն մին քանի հնացած մտքերի տէր մարդկանց համար ախորժ է թուում կարդալ էնպիսի գրութիւններ, որոնց մէջ կան յիշոցներ, կծողական և կրքոտ գրած բառեր։ Ճաշակագէտ ընթերցողները ձանձրացել են, կամ լաւ սաեալ, զզուել են էդպիսի գրուածքներից, կռիւներից, անախորժ խօսքերից։ Իմն եթէ գանում են էդպիսի գրողներ, նշանակում է, նրանք կամենում են հաճոյանալ միայն էնպիսի մարդկանց, որոնց ճաշակը դեռ չէ նրբացել։

---

(1) Ճարտասանութիւն Կաշանակում երես 152։

(2) Ռուսաց ժամանակումը հեղինակի համար սաստիկ խօսքերը համարում էին Պոլեմիկ։

ՅԴպիսի գրուածքներին պատասխան տալը հարկաւոր չէ. նրանց գաղափարները դնում են ամէն ուսումնական բարեմիտ և հասկացող ընթերցողները։ Բայց երբ որ գրականական նիւթի վրայ խօսելով սկսում են բանբասել և զրպարտել մարդու էնպիսի գործքերումը, որ քնում են գրականութեան հետ կապակցութիւն չունին, երբ որ վիրաւորում են մարդոյ և քաղաքացւոյ անձնաւորութիւնը և դիպչում են նրա պատուին, — մի՞թէ մարդ պարտաւոր է լուռ կենալ. կամ եթէ պատասխան տայ, մի՞թէ եղ կընշանակի պօլեմիկ գրել. մի՞թէ մէկը իրաւունք ունի իրա տուած մարդուն զանազան անվայելուչ խօսքեր ասել, յիշոցներ տալ, իսկ նա իրաւունք չունի ցոյց տալու վիրաւորողին նրա խօսքերի անվայելչութիւնը և անբաղաքավարութիւնը . . . իրաւունք չունի ասելու նրան՝

«Պէտրոն, ինչի՛ը ինչքան կամենաս,
«Մայն չարիս էլ Ճանաչի՛ր։ (1)

Պիտեմ, որ կան էնպիսի գրուածքներ, որոնց ամօթէ պատասխան տալը, ինչպէս որ կան էնպիսի մարդիք, որոնց հետ վիճաբանելը նշանակում է ստորացնել իրա անձը իրա սեռակցոյ աչքումը և հասարակաց գատողութիւնումը։ Բարհամարհելով լուռ կենալը — ոչինչ լուռ պատասխանն է եղպիսի գրուածքներին և մարդկանց։ Բայց ի՞նչ անենք, երբ որ մեր գրականութեան մէջ վիրաւորողը համարւում է Հշմարիտ . . . ի՞նչ անենք, երբ որ մեր գրականութեան մէջ լուռ կենալը կամ պատասխան չտալը, թէկուզ լինի հեռուանք արհամարհանքի, համարւում է անիսոս յանձնառութիւն ոկարութեան կամ գործքի սուութեան։ Ես պատճառաւանէ որ, ներկայ պա-

---

(1) Հայ. Բան. 1859 թուի մարտ 1. երես 48։

տասխանին մէջ ես ստիպուած կը մնամ տեղ տեղ, մանաւանդ վերջումը, խօսել ենոխի օտար առարկաներին վրայ, որ կատակցութիւն չունին ոչ թէատրոնի, ոչ կըրիտիկի և ոչ դրամատուութեան հետ, միայն պ. Պրիտիկոսի տաճնները հիւրերու համար. բայց էս էլ չէի տանիլ, եթէ գիտնայի, թէ իմ պատասխաններից չի կարող բացուել ոչ և իցէ ճշմարտութիւն և թէ մոռցող և ճշմարտասէր մարդիք արժանի չեն համարիլ կարդալու իմ պատասխանը։

Պ. Կարինեանցի մոքումն էլ չէր անց կացել, թէ ի՞նչ է նշանակում հիւրին, ինչքա՞ն մեծ է հիւրիկոսի պարտաւորութիւնը և ինչքա՞ն մեծամեծ պայմաններ է պահանջում նրա պաշտօնը, և ենդուր համար նա վրատահացաւ յանձն առնուլ էդ գործը, և հրապարակ դուրս եկաւ հիւրիկոսի շորերով, էն էլ ոչ թէ տաքարկան և հեշտ առարկայի, այլ թէատրոնական հատուածի վրա խօսելու, էն ժամանակ՝ երբ որ հարիւրաւոր երևելի հեղինակների միջից հաղիւ երկուսը կամ երեքը վատահանում են էդ պաշտօնը յանձն առնուլ, մանաւանդ էդպիսի հատուածի վրա։ Իսկ նա՝ մարիկ չլսելով էստուցը, դրեց իրա ննման հիւրիկը, որի դէմ ստիպուած եմ էսօր ես գրել բացատրութիւն։ Ի՞նչ անեմ. երբ էլ իմ Հակատին էլ էս էր գրած, որ իմ գործքերը թողած, ինքնակոչ կրիտիկոսներին հասկացնեմ էն, ինչ որ ուսումնականները և քաղաքակրթեալ մարդիքը վաղուց գիտեն։ Այսպէս որոյ բացատրութեանս կարդը պահելոյ համար, ենթադրեմ և հիւրիկի նշանակութիւնները սրտայոյսերուց յետոյ, պարտաւոր եմ ցոյց տալ, թէ ի՞նչ է նշանակում քէմոիկոն հատուած։

Պ. Քէմոիկոնական կամ քէմոիկոն հատուածն է նկատրութիւն անցից մարդկային կենաց յոյնական ակնարկ առնելի դրութեան, յորում նոքա դէմ յանդիմ-

ման պատկերական առաջի աչաց հայեցողաց։

Այս տեսակ հեղինակութեան համար նիւթք առնուսում է երեք աղբիւրներից՝ 1. Պատմութիւնից, երբ որ հեղինակը դուրս է բերում պատմութիւնից վերը առած ճշմարիտ անց.ք և էն անձինքը, որոնք գործ են կատարել էն անց.քի մէջ, և պատկերացնում է էն անց.քը քեռի վրա էնպէս, ինչպէս որ յատուկ կատարում է քրա ժամանակին։ Հեղեցկութեան համար կարող է հեղինակը ասեղծել և յարմարացնել կողմնակի յարակցութիւններ, բայց պարտաւոր է անխախտ պահել գլխաւոր անց.քի պատմականական ճշմարտութիւնը։ Այս տեսակ հատուածը կոչվում է պատմական։ 2. Ֆանտազիայից (երևակայութիւնից) երբ որ հեղինակը պատկերացնում է մարդացածին գործ, երևակայութեան մէջ ծնած, կենդանի ձևացնելով անձնաւորութիւնք անմարմին էակներից (հոգեաբ աշխարհ.քից) և նուիրելով նրանց անընդմիջական յարակցութիւն մարդկերանց հետ։ Այս տեսակը կոչվում է Ֆանտազիական։ 3. Պարբերական նոր բիայ հէռանից, երբ որ հեղինակը դուրս է բերում մարմնաւոր անձանց քաղաքական կամ առանձին կերանքից մէկ անց.ք և նկարագրում է նրանց անձանց բնաւորութիւնները։ Այն մէկ նիւթը կարելի է ներկայացնել զանազան ձևով, այն է՝ տրամալի, ուրախական, երգիծական, ծաղրական. և համաձայն ձևին հեղինակութիւնը լինում է՝ եղերերգութիւն կամ երգահանութիւն, դրամա, (դուռանական) կոմեդիա (ձաղրութիւն), ֆարս, հանեակ, վոդեվիլ։ Բայց ամէն տեսակի նպատակը պէտք է լինի էստետական նպատակ։

Ինչպէս վերևումը ասացի, մեր Ֆիլիպեն թատերականումը առաջին անգամ ներկայացաւ տէր Ստեփան Սանդենեանցի հեղինակութիւնը, որի նիւթն է երբորդ տեսակից, բան որում ներկայ կերանքից է առած, և որ կողմ

մու թեամբն է հոմերէն։ Որոնց յետոյ ներկայացան իմ
չորս հատուածները, որոնցից երկուսը են հոմերէն—Ելդե-
ՀԷՒ, երկուսը դրամա. բոլորն նիւթերն են Զ և Յ տա-
ուարներից։ Իսկ պատմաբանական հատուած եւ չունիմ
դեռ գրած, բայց պատմ, իմ կարծիքով, դրա գրելու
համար պէտք է, որ հեղինակը ունենայ բաղմակողմանի
և ընդարձակ գիտութիւններ, ինչպէս դրամատիքական
արհեստը, էնպէս էլ պատմութեան մէջ, և բաց
յայտնանէ հատուածն և Ճիշտ տեղեկութիւնները ու-
նենայ հին ժամանակի կեանքից և բնաւորութիւններից,
լաւ ըմբռնած ունենայ մտքումը էն դարու հոգին, էն
ժամանակուայ ոգուն թիւնները, հասկացողութիւնները.
էնպէս տեղեակ լինի նկարագրած ժամանակին, որպէս
թէ ինքը կացել է էն ժամանակումը, էն տեղումը, էն
անձանց հետ. մէկ խօսքով պէտք է լինի հոգեբան դրա-
մատուրգ։ Իսկ առանց էս պայմանները լրացնելու, միայն
մասնաւոր տեղեկութիւն ունենալով պատմութիւնից,
պարզամիտութեան էղէբէրգութիւն գրել, կիսկիսով և շտե-
ղով մուցածին բնաւորութիւններ, էս ամօթ եմ հա-
մարում։ Երբեմն ժամանակ հատրաւ կար թ. խիզելիզումը,
թէ իմ բեմական հատուածներն վրա կրկնակ են գրում։
Էս հարցը լսելով էս շատ ուրախանում էի, յուսա-
լով, թէ մեր ուսումնականներից մէկ քանիսը կըքննեն
իմ հատուածները և մի լաւ միջոց ցոյց կըտան նրանց
կանոնաւոր և անկանոն տեղը, դեղեցկութիւնները և
ապերաս թիւնները, լաւ որում անկարելի բան է, որ տաղ
հատուածը ոչինչ լաւ միտք չունենայ իրա միջումը,
մանաւանդ որ կրկնակի գլխաւոր կանոնն է՝ ասելի գա-
ղիր դանկաստանութեան արժանին, քան թէ դատապարտել,
ինչ որ դատապարտելի է։ (1) և կամ կը տարբերեն ինչ

(1) Դատապարտելին.

Եղբիսի հատուածներ գրքում կանոնները, քանզի թեմ-
ների և անձնաւորութիւնների Հիշողութիւնները ձե-
ւերը և ցոյց կրեան զանազան Հշմարտութիւններ, որոնք
պահանջում է նոցից Հոշակը էս տեսակ հեղինակներից
և այլն, և այլն . . . և պատրաստուում էի հրատարակու-
շնորհաւորութիւն յայտնել նրանց . Բայց տարաբաղ-
դաբար իմ թեատրական դրուածքների համար գլխաւոր
կրիտիկա դարս նկատ ա. Կարինեանցը, որի կրի-
տիկի մէջ 'ի զուր է որոնելը իսկական կրիտիկան կամ
գոնեա Պօլէմիկան յատկութիւններից մէկին ու մէկը,
քան որում նրան բաղարելն անծանօթ են կրիտիկի և պո-
լէմիկի կանոնները։

Ես ուզում հատատելու համար էս տեղ առաջ եմ բե-
րում նրա կրիտիկից մէկ քանի յօդուածները և նրանց
դէմ իմ բացատրութիւնները ։

Ա. Կարինեանցը իրա կրիտիկական ընտրութեան տակին
է դցում առաջ «Պօլիֆոնը» կոմեդիա— էլեգիան։ Սրա
վրա նա կարճ է խօսում և իրա հատկացուցութեամբը
ոչինչ դատապարտեան արժանի բան չը գտնելով, խօսում
է ընդհանուր ձևերով և ասում է, թէ քնարական դրա-
քաներ է . այլ թէ ի՞նչն է և ո՞ր դասին է ըն-
կանից դրա, չի ցոյց տալիս։

Ընդ հատուածի յատկութեան մէջ էս տեղ եմ, թէ երկու օրումը դրեցի և թէ էս տեսակ հա-
տուածը առաջինն է մեր ազգի միջումը։ Սուտ չեմ ա-
սել . էն տեղ ցոյց տուած հոշիւը տեղնելու ցոյց է տալիս
սատանայ Հշմարտութիւնը, քան որում 26 են յուլիսի
տէր Սահակեան Պատրիարքի դրուածքը նեղկացրին,
իսկ օգոստոսի 10 են իմ «Պօլիֆոնը»։ Բայց էս էլ-
գիա- օրա-ն ասելով բնաւ չեմ կամենալ պարծենալ, ինչ-
պէս որ մեղադրում է պ. Կարինեանցը, այլ ընդ հակա-
ռակը ցանկացել եմ և խնդրել եմ, որ ընթերցողները

ներքոյսիս գոնուին թերու թիւններին, զոր որուամ էնքան կարճ միջոցումն է գրած։ Նշել է ասել եմ թէ ասոնց է մեր ազգի միջումը, նամանաւանդ չեմ պատասխանել, զոր որուամ յաստուկ. որ երբոյ անուանիների մէջ երբա ներքեւելը և ընդունելը առաջինն է։ Պ. Կարինեանցը անձնուն ծիծաղելով (1) էս խօսքի վրա՝ չի ցոյց տալը, թէ ինձանից առաջ ովքեր են գրել էդ տեսակ, այսինքն ներկայ կեանքից առած բան էդ ընդունել և էդ ներքեւ վրա. ուստա ուրեմն չի կարողացել ապացուցանել ասածիս ստութիւնը։

Պ. երջասէս ոչինչ չըզգանելով, մէջէ բերում մեր միջումը պատահած խօսակցութիւնը անձնուն։ և ասում է՝ «թէ շատ ընդամ այս մասին խօսեցանք ա. հեղինակի հետ. բայց 'ի զուր, նա մեզ պատասխանում էր՝ Ղուրանի վզրիադում ոչինչ է մարդի տալ բանին»։ Շատ ճշմարիտ է ասում ա. Կարինեանցը։ Նրը որ իմ գրած Պ՝էին դաղանած, թոռը էլ Կոմերդիան ներկայացում թէատրոնումը, ա. Կարինեանցը մէկ օր մէկ ընկերութեան մէջ, որ տեղ որ եսէլ ներկայ էր, սկսեց դատողութիւն անել իմ գրուածքի վրայ միայնութիւններ բերելով Պ՝ողոսոկց։ Էդ դատողութիւնները մի և նոյն էին, ինչ որ յետոյ գրեց երա կրիտիկումը։ Գրեթէ, թէ մինչև որ ատելանն է հասում էդ պարոնի հասկացողութիւնը թէատրոնի և բեմական հատուածոց մասին, և թէ որ տեղ է տեսել նա թէատրոն, եւ կարճ պատասխան տուի

---

(1) Զարմանալի եմ համարում հանդէս հանել էս տեղ ա. Կարինեանցի քաղաքավարի խօսքերից մէկ քանի խիստ թեամբ՝ «ի՞նչ, ինչ, ինչ», Հայ. (տես, Պ՝եղու Զայատանի 1860 տարի № 10 և 11. երես 76 և 77)։

նրան, թէ էդպիսի առարկաներին վրա խօսելը պէտք է ունենայ Նէրսէսեան կրթութիւն, և յետոյ էն Հայեցողական մարդ ասել. և թէ Նոսոցին՝ որ իրա օրուանը, բայց 'ի Ջուանգանների, ալջերի և կապիկների խաղալուց, ոչ ինչ չէ տեսել, ի՞նչ հասկացողութիւն պէտք է ունենայ թատրոնից և ի՞նչ տեսակ քննութիւն կը ընէ նրա արուեստը։ Ես պատասխանը ես կրկնում եմ և միշտ էլ կը կրկնեմ, և ամէն խոհական մարդիկ ինձ հետ կը համաձայնին։ Իսկ եթէ պ. Կարինեանցը ես իմ տուած պատասխանը, (կէսը թաքցնելով) դուրս է բերել միայն էն նպատակաւ, որ հասկացնի, թէ ես խօսակցութեան մէջ ասել եմ Նէ-բոռեցոկի ՆՀՔԼԷՊՈՎ վիսխանակ ասելոյ Նէ-բոպոկան հայեցողութիւն, ցոյց է տուել էդրով, թէ շատ մանր բաներով պարապող մարդ է (МЕЛОЧНЫЙ ЧЕЛОВѢКЪ)։ Նա կարող եմ ւ՛չ միայն նրա բերանացի խօսակցութեան մէջ, այլ և ապուծ շարադրութիւններումը գտնել Նոբոկի բառը, բայց ժամանակ չունիմ էդպիսի տուտուց բաներով պարապելու։

Միայն էս երեք բանի վրա է խօսում պ. Կարինեանցը «Մոսկովսկայա — վեդեմոստի» քննութեան մէջ. բայց էդ քննութիւնները ես չեմ տեսնում կրիտիկի յատկութիւն։ Նրա հատուածի գործողութեանց մէջ միան քանիցից գրաբար բառը, կրիտիկոսը պարտաւոր էր ցոյց տալ, յատկացնել տեղերը և ապացուցանել, որ ամէնքը տեսնէին, և ոչ թէ դարձակ խօսքով ասել և անց կենալ։ Դպէս ամէն մարդ կարող է խօսել առանց ապացոյցի. կարող է ասել, թէ ձիւնը սև է, անձրևը ցամաք, և ապացոյց չբերել. դրանից ի՞նչ օգուտ, մէլ կը հաւատայ էդ ասողին։ Բայց եթէ ապացոյց բերի, էն ժամանակը նրա ասածը կունենայ արժանաւորութիւն։ Այ՛ և էլ՝ առանց ապացոյցի, առանց փաստի ունայն խօսքեր են։

«Պէտք դշուռուած ինչ-որ կէր» կոմեդիա — վոդեվիլի վրա ոչ։ Կարմենանցը խոսում է երկար։ և որովհետև էդ հաստատածը դեռ ապած չէ, վասն որոյ նա թոյլ է տուել իրան ազատաբար, մարքերը փոխարկել, ձևերը և տեսարանները ծռմռել, մինչև որում էնպիսի բաներ ասելացնել, որ իմ գրաւածումը խռկի չքերան, (1) և տհաստատակ ազատաբար է ցոյց տալ, թէ էն քնաւորութիւնները, որոնք նա պատկերում եմ բեմի վրա, իբրև թէ էլիտարներում են բոլոր։ Ի՞նչ ցոյց ազգին։ Նա հաստատածը նա չեմ տուել ոչ։ Կարմենանցին կարդալու, և նա լսել է միայն բեմի վրա կատարուելու ժամանակը։ արեմն շատ զարմանալի է, որ նա էպիգոն մարքուին է պահել մեկ անգամ լսածը։ Բայց նրան ձանաչողները գիտեն, որ նա շատ հմուտ է էդպիսի գրուածքները ձեռք բերելու իրան յայտնի ազնիւ միջոցներով։ Որանց ստուգիւնը ցոյց տալու համար ամենից հեշտ միջոցն էր տպագրութեամբ հրատարակելը էն հաստատածը։ բայց որովհետև դեռ ժամանակ և միջոց չունիմ տպելու, վասն որոյ առ ժամս բաւականանում եմ միայնագրաւորութիւնով։

Ֆ. Էստրանակոն բեմի վրա ներկայացրած քնաւորութիւնը երբեք չի կարելի ընծայել բոլորին։ Պրիբայեզդովը, որ անունը յիշում է ինքը ա. Կարմենանցը, ցոյց է տուել, (իրա հազուադիւտ Горе отъ ума կոմեդիան) թէ ինչպէս Ֆամուսովի աղջիկ Սոֆիան իրա սիրոյն հետ սաղ դիշերը փակուած է իրա սենեակումը և աղախին Լիզան պահապան է կանգնած դրան մօտ և զարթեցնում է նրանց, որ աղջկայ հայրը չըգայ և չը-

(1) Նա տեսակ տանջանքի տակ «Պօղիքարն» էլ կամենէր, եթէ ապած չը լինէր։

տեսնել։ Բայց էստուար համար ոչ ոք չի ասել, պ. Կարմ-
ելիանցի պէս թէ հելլինական կամեցել է էս պատկառա-
թիւնը բոլոր Աստուց նշնելու աղջիկներուց վրա դնել
կամ ասել, թէ բոլորը էդպէս են անում, թէկուզ յայտ-
նի է, որ էս հատուածը Աստուց ազգի առանին կեռան-
քից է վեր առած։ Ազգարարը էդպէսի գործողու թիւն-
ները և արանից շատ աւելի մեծերը ցոյց են տալի բոլոր
Նէրսէսեանց թիւառանները։ որտեղ կարծեմ ոչ ինն-
ձանից և պ. Կիրտիկեանից աւելի լուսաւորեալ և բարե-
կիրթ մարդիք են լինում։ Շատ երևելի հելլենականների
գրուածքումը ցոյց են տուած զանազան ծաղրական գործ-
քեր և տեսարաններ։ Նէրսէսեանց բանի վրա ազգերը
և աղջիկները ի՞նչ խոտակցութիւններ, ի՞նչ արարմունք,
ի՞նչ տեսակ համբոյրներ չեն կատարում։ Գիրք Գ. գլ.
Լորմա. Ի Ռոմբեցիս Քօրչիս, Ի Էսպանիայ, Ի Ֆրանսէ
և ուրիշ օտերանումը ոչ միայն խօսքով են ինոգրում
համբոյր, այլև հրապարակաւ համբուրում են երեսը սի-
րահարուածները։ Բայց ոչ ոք չի ասում պ. Կարմելի-
անցի պէս, թէ էդ հատուածների հելլենականները ան-
բարոյական և անպարկեշտ մարդիք են իրենք, և էդպիսի
անիրաւութիւն բաներ են ցոյց տալի տիկնանց և օրիորդաց
առաջը, և ոչ ոք չի ասել պ. Կարմելիանցի պէս, թէ
էդ ցոյց տուածները ամէնքն են անում։ Բաւական ցոյց
են տալի շատ անգամ առաջուն, գողալի, մարդասպա-
նութիւն, կաշառակերութիւն, ապերախտութիւն, հայրա-
սպանութիւն, և այլն և այլն. էդ անողներն էլ բոլորը
ընում են մէկ մէկ ազգից։ Բայց ոչ ոք չի ասում, թէ
էդ բոլոր ազգին է վերաբերում, այլ ամէնքը ասում են,
թէ ազգի միջից մէկ քանի մարդիք կան էդ գործողու-
թեանց տէր։ Ամէն մարդ, որոնք քննում են կամ
ժամանակագրական գոնում են Աստուածաշունչ կամ

28996-62,1631.1
Ս. ԱՄ. Ա. ՄԱՍՈՒՆՅԱՆ
Ս. ՄԱՍՈՒՆՅԱՆ ԱՆՎԱՆ

ուրիշ Եվրոպական ազգաբանություն և երևելի քաղաքներ-
բումը, հաղորդում էդալիսի օրինակներ տեսակ են թեսա-
լոնիկեցումը. բայց ոչ ոք չի ասել, թե ինչնանց և օրի-
որդաց համար անպարկեշտություն է էդալիսի քաներ տես-
նելը կամ էդալիսի խոսքեր լսելը։ Ինչից մեր ֆելիչը-
զու Խաղալիան օգերոյությունը հաղորդ անդամ նեկոյ են
դանում բոլոր երևելի մեծատոհմ իշխանք, իշխանու-
հիք, ինիկայք, ազնվականք, օրիորդք, քաղաքացիք,
վաճառականք, և արհեստաւորք թե՛ Ազգաց և թե՛ ու-
ղիշ ազգերից և ոչ մեկը չի վերաբերում էն տեսարան-
ներից, որոնք ներկայացնում են էնտեղ։ ոչ "Լորմոյի պառն-
կանալից, ոչ] ռիբեցիոյ ապօրինի որդի ունենալից, որ
որդին չընճանաչելով իրա մօրը, սիրահարվում է նրա վրա,
ոչ "Դոն Բարդոլոյ աղջկացու զոռնալի համբույրներից, երբ
որ կաշառած սարիրեը, նրա հոգաբարձուն երևը վերա-
նելուց, աչքերին սապոն է քսում, և ոչ մեռանելից։
Մի՞թե թեատրոնական բեմի վրա էդալիսի քաներ ցոյց
տալը նշանակում է ունպարկեշտություն, անքաղաքավարություն,
էնահիանից դուրս քան, հրեշ, ինչպես կարծում է ազ. Կա-
րինեանցը։ Ա՛չ ապարքեն էդ հատուածների հեղինակները
նպատակն է ցոյց տալ էդ տեսակ զոլցից ծաղրելի կողմը
. . . ոչ ապարքեն որանք տեղն 'ի տեղը ուսուցանում
են բարոյականությունն և խրատ են տալիս զգուշության.
ուրեմն ինչքա՞ն խակ է դեռ ազ. Կարինեանցի հասկա-
ցողությունը . . .

Այս կամեցումը ես ցոյց եմ տալ զանազան ընտ-
ատրությունները և յուսակցրել եմ էն բնաւորությունները
ունձանց մէջ. զջ. թերակիրթ, խակամիտ և լուսաւորու-
թեան վրա ծառը հասկացողություն ունեցող աղջիկ
(Ընան). կոպիտ, անկիրթ աղջիկ (Սոֆիա). բարեկիրթ,
խելոցի, պարկեշտ աղջիկ (Ակեկել). անվարձ, պարզա-
միտ և անհեռատես երիտասարդ (Սիմոն), շահախնդիր,

կեղծաւոր, խաբեբայ, ժլատ եւ մոլոր (անապաշնոն տասիճա-
նաւոր Գ. էսրդ)։ անախառ՝ բայց հասկացող կին (՝Լատոյ)։ եւ
այլ ազգին նմանք։ Այս անձինքը ցոյց են տալի իրանց բնաւո-
րութիւնները զանազան գործքերով եւ խօսակցութիւնն-
երով։ բայց ուշ մեկի միջոցը էն շարժմանց կամ արարող-
թեանց նշանն էլ չկայ, մինչ որ անուամ են կամ խօսամ
են Նուրատայոց թեատրոնները, մինչեւ կը մի ոյն
առ այժմ բոլոր բարեմիտ ներկայ գանուածները, իսկ
տարբերութիւնից յետոյ, բոլոր ընթերցողները։ Այլ
այնու ամենայնիւ ապ. Կարինեանցը առում է, թէ բոլոր
հատուածը լիքն է անպարկեշտութեամբ եւ անբարոյա-
կանութեամբ եւ աշխատում է հաւատացնել իրա խոս-
քերի ճշմարտութիւնը դուրս գրելով իմ հատուածից
միայն էնպիսի տեղերը, որք առանց բավականի, երե-
ւում են կարծիքական, եւ ասում է, թէ էդ ծաղրա-
կան արկածութիւնները եւնուխիլ եմ բոլոր ազգին կամ
թիֆլիզցոց։ Ողորմելի՛ աշխատութիւն . . . . .

Գ. Կարինեանցը ծուռը պատմելով իրա կրիտիկի մէջ
— կոմեդիայի բավականութիւնը, (76 երեսումը) ասում
է՝ «ասումն առած աղջիկը, Ինանը, իրան Ֆրանցոյ զե-
ղին ուսուցչի հետ սիրահարուում է եւ ասածոց ծնողաց գե-
ղոնենին նշանուում է»։ Այս տեսակ պատմելոյ աստ-
թիւնը պարզ կը տեսնեն ընթերցողները հետեւեալ խո-
սակցութիւնից Գ. էսրդի եւ փեսայ Նիկոլի։

Գ. էսրդ (Գեորգի) .քու Ինանու համար ես էդուց
առաւօտ կը խօսեմ նրա վարժապետի հետ։ Ես վաղուց
նրան հաւանում է եւ շատ շատով կը փոխեմ։ Գ. էսրդ
էդ վաղը (2 հարիւր թուման) .քիչ է նրա համար, բայց
ես կը .բարգեմ նրան եւ կը հաճեցնեմ»։ — Մեկ ստ-
ատարանումը)

Նիկոլ (ատուցիչը, վերայ) շատ լաւ բան է . . . երկու
հարիւր թուման վաղ, սիրուն աղջիկ, բաւական ուսեալ

. . . Հալա պատկերէրուց յետոյ էլ կարող եմ ասելից-
նել մի քանի բան . . . Ամենից լաւն էն է, որ սիրահա-
րուած է ինձ վրա . . Նոր առաւօտ Նիստ Նոսկովսկիները
ինչա, ամէն բանը պարզեցրուց, միտին եկանք էս տեղ,
Ինանու ծնողքը օրհնեցինքմեղ և նշանը տուին։

Կարծեմ որ էս խոտակցութիւնքը բաւական ցոյց են
տալիս, թէ նրանք նշանուել են աղջկայ ծնողաց գիտա-
նիութեամբ, կամքով և օրհնութեամբ։ Մի թէ ապ. Կա-
ղինեանցը կամենում էր, որ սրանց նշանադրութեան հա-
մար էլ առանձին տեսարան էլ շինել։ Նա կարծեմ,
որ էդ շատ տեսարդ էր լինելը, բայց որում էդ շատ հա-
ստատական բան է. և եթէ ամէն էդպիսի հանդամանքների
համար առանձին տեսարան շինուի, էն ժամանակը թա-
տրոնը պէտք է շարունակուի երկու օր անընդհատ։—
Բայց երևի թէ ապ. Կաղինեանցը չի տեսել, կամ չի
կամեցել տեսնելու էս դրած խոտակցութիւնքը։ Վէր-
չինը տեսի հաստատի է, բայց որում իրան ձեռնտու չէր
տեսնելը և իրա նպատակին չէր հասցնիլ։

Ապ. Կաղինեանցը շարունակում է իմ հաստատած բո-
վանդակութեան պատմութիւնք՝ «Գնտրար և իւր կինը
իրանց աղջկանց հոգսի մէջ ընկղմած խոսէր են տոմ իրա-
րու պէտ։ Ընդ կամեմ այս մի տեղի ունի մեր կեանքից է
էր առած։ Բանը միայն քանատուծութիւնը չէ, խո-
տանքների և խոսելու ժամանակի անյարմարութիւնը տեղի
ունենում էր երդածները։ Մոյն մի՛ մուռանայ, որ
տէրտ է, ինչպէս ինքը, (իբր թէ նա) անուանում է։»

Դա իմ դրած հաստատածը չէ օպերա, այլ Գոմէդիա—
Դէրեվէր, ինչպէս դրած է վերնագրումը և ինչպէս երե-
սում է կազմութիւնից, բայց որում մեծ մասը կատար-
ուում է խոսակցութիւնով, և տեղ տեղ միայն մասը եր-
գերով։ Գոմէդիա դրել նա չեմ կարող, բայց որում մու-
ղիկայ չը գիտեմ, ուրեմն և հաստատածս անուանը չէի

կարող դնել օպերա։ Այս երբէք և ոչ մէկ տեղ չեմ հանդիպակուել ասելու, թէ իմ գրածս օպերա է։ Այլ ինչպէս պէտք կարող էի ասել. ուրեմն հարկաւոր պէտք էր գրել եւ օպերա, երբ որ մեր նորածին թատրոնը տակաւին ոչ կանոնաւոր ուսեալ երգիչներ ունի, ոչ իրա տեսարանն աղգային մուզիկայ։ Մի թէ կարելի՞ է առանց մուզիկի օպերա գրել. երևի յայտնի չէ իմ գերբիմաստ կրիտիկոսին՝ որ առաջ մուզիկան է գրուում, յետոյ բառերը օպերայի համար։ (1) Հրատարակու խնդրում եմ ս. Կարինեանցից, որ ցոյց տայ ինձ նմանատիպ հրատարակա, թէ ես որ տեղ եմ անուանել իմ հատուածը օպերա. իսկ եթէ չի ցոյց տալ, էն ժամանակը կ'իմացուի, թէ ատում է ատում և չը գիտէ օպերայի նշանակութիւնը։ Բայց ես տեսնում եմ, որ նա խառնում է օպերայի և վոդեվիլի նշանակութիւնները, ինչպէս խառնել է Ինգոպրոնի, պեռոբոնների և գորշոգոլ-ի-ների նշանակութիւնները, անխտիր գործ ածելով մէկը մէսի տեղ։ Պատերազ ես կրկին և կրկին յայտնում եմ նրան, թէ իմ գրուածքս օպերա չէ, այլ կոմեդիա—վոդեվիլ է, և հէնց էլ պատճառաւ Պետրոսը և իւր կինը խօսելով իրանց աղջկերանց վրա, խաղ-ը են ատում իրարու դէմ։ Իսկ եթէ նա անյարմար է համարում նրանց խաղ ասելու ժամանակը, թող աշխատութիւն յանձն առնի, տեսնի Ռուսաց և Ֆրանսաց լեզուները և յետոյ կարդայ նրանց վոդեվիլները և կոմեդիա—վոդեվիլները (2)։ Այն տեղ կը տեսնի, որ ոչ թէ միայն էդպիսի հոգացողաց թեանց մէջ ընկղմած,

---

(1) Տես. Հայ. Ռեվիզորոյ 1859 ամի մաս 2. յաղագս օպերայի։

(2) Դրամատիքական հաւաքուածք (Драматическій Сборникъ) 1859 և 1860 р.

այլև բանիս թեւամբ բարբառած կամ ասիշ զգացմունք. քանի վերոյշեալ ժամանակումը շատ անգամ երգով են յայտնում իրանց միտքը, և էս ևս թե ապիրատում է, այլ զ'զգեցկացնում է տեսարանը։ Որևէն տեղ չ'եմ տեսել, որ թեատրոնի վրա խոսողը պէտք է ունենայ Նշ-ուպէտեան հայեցուածք և ձաշակ, որոնցից զուրկ է ալ. Կապրինեանցը։

Իմ հասասուածումը ցոյց է տուած, թե 'Լինան էն տեսակ կնանիքներից է, որոնք իրանց ոգուց պակասում թեանները չ'են կարենում տեսնել, և աղուսի պէս միշտ գովում են իրանց ձուտերը, իսկ նրա մարդ Պետրոսը աշխատում է հասկացնել, թե ապուղ աղջիկն տուելի հարկաւոր է ուտում տալը, որ էնդրսել ծածկուի նրա պակասութիւնը։ Նշոր որ 'Լինան տախտում է նրան, որ հնարք գտնի ապուղ աղջիկը մարդու տալու, Պետրոսը պատասխան է տալի՝

«Դ.պա իս վնունց զատ անիմ . . . ունմը թաւազոց «անիմ էդ. քու գոլած Ինդու մանթէն . . . ունմը տեմ, «թե արի՛ իմ ոիլ տիսիդ ու քացխած աղջիկը տու։» (երգում է)

Պետրոս

«Թե՝ աղջիկը տզիդ է՝ մամի հոսմա կրակ է,
«հէնց զիդի, թե զբանրսել զեշուլթինը կու ծածկէ։
«թե վաբ օմքին քոռանոց, շատ վուղին թամահ անէ,
«միշտ վոյ կուտոց իր զլխին, իր տուն կրակ կու տանէ։
Նունց վաբ էրէսը զեշ է, էնէնց հոզին էլ զառն է,
«միշտ կու կռուի մարդու հետ, խղճի հոզին կու հանէ։
«Մարդը սիրել չի կանոց, նա մարդու միտը կուտէ,
«կոսէ՝ «Ես վուղ իմ բերի, ջանդ դուս դոյ ինձ սիրէ։»

'Լինոց

«Զ'էշ աղջիկը տան համա խիստ հարկաւոր ինքին է,
«կարել, ձևել նա գիտէ, օջախը դիր ձեռքին է։

«Թէ վրայ ուսումն էլ ունէ, կոմպոզիտորը կորած չէ.
«ու թէ վատը շատ ունէ, էդ դիւի մեղքն կուծածիկէ»
Այս երգերի համար ալ. Կարինեանցը գրում է՝ «Այս
ձեզ մի շնորհքով բարդաքանութիւնով լիքը և բնու-
թիւնից առած ուռանուար. Կինցէ բանաստեղծը.»
Այս շատ շնորհակալ կը լինեի ալ. Կարինեանցից, եթէ նա
ինձ վրայութիւնով ցոյց տուած ըլնէր, թէ ի՞նչ պակա-
սութիւն կամ ազնվութիւն կայ էս երգերումը և թէ
ի՞նչ անբարդաքանութիւն և բնութիւնից զուրկ բան կայ
նրանց միջումը. Այն ժամանակը էս առանց հիգնութեան
կ՚ասէի՝ կինցէ կվերանար. Բայց տարաբաղդաբար ես էս
խօսքերից ոչինչ չի տես իրա հրաշալի կվերա-
կումը։ Ուրեմն . . .

Իմ հասուածումը Պետրոսը աշխատում համոզել
իրա ինկան, որ չընդդիմանայ Սօֆիային օտար երկրացու
տալուն, ասում է, թէ նրա պէս ազնվ աղջկան էդքան
քիչ բաժինով մեր հիմիկուայ լուս ազգերից մէջ ոք չի
առնիլ. և էս խօսքը ապացուցանելու համար երգերում
համեմատում է Ֆրիքլիզներից անցեալ ժամանակի կեան-
քը նոցիայի հետ. հակադրում է նրան, թէ որքանով
հիմիկուայ նրբացած և քաղաքակրթած կեանքը էնպիսի
մեծ պանհանջմունքներ ունի, որ անցեալ ժամանակնե-
րումը երբէք չէին ունեցել, էն պատճառաւ մեր հիմիկ-
ուան աղջիկն էլ հազար թումանններ են պահանջում, որ
կարողանան ժամանակի պահանջմանց դէմ օրա պատշաճ
և վայելուչ կերպով կինիկ պահել մեր հիմիկուան Ֆրիք-
լիզումը։ Երգածը էս է ամենայն ուղղութեամբ՝
«Ոնան տեհնում էս վանց փոխում էլ ին. քաղէր ադաթն
ու վայրը,
«Էնդու հատա էլ բարկիլ է խալխի մէջը ու խիլքը։
Գանձնիրու, քօշիրու ախչ՝ էկան ադաթն, չէ.քմէրը,
«Դրօշկէրում, կալասկէրում լեցուել ին մեր քուչէրը։

«Ղրադուխ, ճիթի մոգեաց՝ կարտուլիկ մուտքը է,
«զադիկի տիզ՝ մաղով սալուպ, մախմուր բուրնուս,
կլոկինիը է։
«Մի բողաշի, արտալի տիզ՝ կատլետ, պուդդինգ,
սուխիը է,
«լոնջելրտա տիզ՝ երծաթ պոդնուց, քիղանի տիզ՝
սաաքնիը է։
«Պրթի դաս կինիրտա մոգեաց՝ Փուրաժկէ.ք ու շլեատալ-
կէ.ք է,
«միսկալ ու քաթանի տիզ՝ պալատնո ու բատիստ է։
«Սոդնի կինկոց պորտանոտմը լիբը երծաթ, օսկիք է,
«մի ոգերանց խոզացածը պրեֆերանս ու վիստ է։
«Ֆ.է վոր կինկան իմբին պոկի՝ մարդու հոգին է հանում,
«մարդը չի ուց, նա կուշտի մը հիմիկուան քաղքումը։
«Նասա հատա մի ոգերքն էլ հոգոր թունիր ին ուզում,
«վոր կարենան կնիկ պահի էսպէս վախտուած քաղքումը։
Ը. Մենայն քարեմիտ և Աշխարհասէր ընթերցող տեսնում
է, որ էս երգումը ամենևին մի կարով էլ չի տուած
թիֆլիսցոց վատութիւն կամ պակասութիւն, այլ
ընդ հակառակը պարզ յայտնած է նրանց մի կողմի յա-
ռաջադիմութիւնը քաղաքակրթութեան մէջ, և թէ նրանց
հիմիկուայ կեանքը շատ ու շատ զանազանում է հին
ժամանակուայ կեանքից։ Ը. մէնքը տեսնում են, որ սրա
բովանդակութիւնը Աշխարհիս է. բայց պ. Կարինեանցը
ուզենալ չը խօսելով 15 շարքերի վրա, զայրի բռնում է
վերջին չորս շարքերից մէկը, այն է՝ Տարբը չի պա, դա
հա-ծուլ տեղ հիմիկուան փոփոխը, և յաճենայն զօրութենէ
աշխատում է ճարել բառին տալ վատ նշանակութիւն։
Ը. մէնից հեշտն է տեսնել ուրիշի պակասութիւնը, և
ամենից դժուարն է հասկանալ հեղինակի միտքը, նրա հետ
միասին զգալ և թափանցել նրա միտքը։ (1) Բայց պատա-

(1) Կուշանակ երես. 151։

ու�մ է, եթէ կարծում է, թէ էդ բառը ես վատ ն-
շանակութիւնով եմ գրել։ Ո՛ւրեմն ապ. Կարինեանցի
կարծածը միջոցումը չեմ ասել ես. ուրիշ շատ հնարքներ
էլ կան, որոնք ինչպէս օտար ազգերի, էնպէս էլ մե-
յոց կանանց միջից մէկ քանիսը գործ են ածել և հիմա
էլ գործ են ածում։ Ապացոյցի համար բերում եմ էս
տեղ օրինակները։

Ընդհատ տարի մէկ չքաւոր արհեստաւորի կին, որին
մարդը պահ էր տուել դառն քրտինքով հաւաքած 10
թուման վրայ, իրա մարդից թաքուն գնացել էր մաղա-
զէնները և զուգս էր առել իրա համար։ Խեղճ մարդը
իմացաւ, մեծ անբաւականութիւններ անց կացան երկուսի
մէջ, վերջապէս մարդը գանգատ արաւ և համարեա թէ
ամբիցիէ զօրով հարկ կարողացաւ ապրանքը յետ
տալ և իրա փողերը առնել։ Էս ճարթել չէ։ Մէյա
չքաւոր մարդու կինը իրա մարդից թաքուն դրաւ էր
դրել տան արծաթեղէնը և շորեր էր կարել իրա համար։
Էս ճարթել չէ։ Երրորդ չքաւոր մարդու կինը գիշերով
իրա մարդու ծոցագէրից հանել էր իրա բաժինքաւորի
մուրհակը (բարաթը), տարել էր զարտուղից փողի մէկ
մասը և շորեր էր կարել։ Էս ճարթել չէ։

Կարծեմ, որ էդ արածները բոլորը ճարթելու հնարքներ
են։ Բաց յայդմանից քանի քանի օրինակներ գիտենք,
որ տեղ մարդը կնկան փող չի տուել, կինը խնդրել է
իրա ծնողքից կամ եղբայրներից, և նրանք չը կամենա-
լով, որ նա յետ մնայ իրա հասակակիցներից կամ հա-
ւասարներից, փող են տուել նրան և նա շինել է իրա
համար զուգաներ։ Բանի քանի օրինակներ գիտենք, որ
տեղ կնանիքը առանց մարդու գիտենալուն, ձիւխ են ա-
ռել իրանց ծանօթներից փող, շորեր են կարել և յե-
տոյ իրանց որդիքը զրկելով ամենահարկաւոր ալիւրոյ քից,
տան ծախից յետ են գցել և փոխ առածը վճարել են։

Բանի՞ քանի օրինակներ գիտենք, որ տեղ կանայք ոչ-սիա ապրանք են տարել վաճառականներից կամ դալա-ներից, և յետոյ նրանց մարդիքը (կամոյ ակամոյ, և մի ծ նեղութեամբ) վճարել են։ Արի՞ թէ էդ հնարքնե-րով վոչ ձեռք բերելը ճարել չի՞ տուել։ Նրանք թէ ա։ Կարինեանցը էս ճարել բառը միայն լոռ գմոց խօսց է հան-կանում և մեկնում, և ուչ թէ էնպէս, ինչպէս որ վայե-լուչ է գրականութեան և բարեբարոյ մարդոց։

Իմ հատուածի մէջ ցոյց է տուած, թէ Պետրոսի աղջիկ Սոֆիան է անկիրթ, անուսում, տգէղ և տանը պատ-ուած աղջիկ։ Էս պատճառաւ նրա իրա մօր հետ խոսակ-ցութեան մէջ ես պատկերացրել եմ նրա կոպիտութիւնը։ Պ. Կարինեանցը ասում է, թէ Ֆ. Ֆիքլիզումը էդպէս չ աղջիկ չկայ և թէ իմ գրուածքս անբնական է։ Իմ կարծիքով Պ. Կարինեանցը չի՞ ճանաչում բոլոր Ֆ. ֆի-քլիզնակ Հայերին, ապա ուրեմն և չի կարող բոլորի յատկութիւնների համար երաշխաւոր ընել։ Կանոն չը-կայ առանց բացառութեան։ Плохо тамъ, гдѣ всѣмъ не безъ урода— (գերդաստան չը կայ, որ մէկ պակասաւոր որդին չ'ունենայ), въ лѣсу не безъ волковъ — (անտառ չկայ, որ գայլ չ'ունենայ)։ Ընհնարին բան է, որ էնքան մեծ բազմութեան մէջ ամէնքը լինին բարեկիրթ, պարկեշտ, և ուրիշ ամենայն առաքինու-թիւններով զարդարած։ Ան մը հայաբնակ քաղաքն է, որի մէջ պատահած չը լինեն ուչ միայն կոպիտ և անկիրթ, այլ և ուրիշ շատ մեծ պակասութեանց տէր տղերք և աղջիկներք, ասք և կանայք։ Ուրեմն ի՞նչպէս է կարելի ընդհանրապէս ասել, թէ թիֆլիզեցւոց մէջ չը կայ և ուչ մի հատ կոպիտ կամ անկիրթ աղջիկ։

Իմ հատուածումը ցոյց է տուած, թէ Պետրոսի վոքը դուստր Ընանը է թերուկիրթ և ծուռը ուղղութիւն ստացած աղջիկ, որ ուսումն առնելով երիտասարդ տղից

տուանձին սենեկումը, որ տեղ ծնողքը չեն ունեցել ամեն-
նահարկաւոր նկատողութիւն, սիրահարուել է իրա ու-
սուցչի վրա։ Նրա խոտակցութիւնը իրա ուսուցչի հետ
ես պատկերացրել եմ ծաղրական ձևերով և ցոյց եմ տու-
ել, թէ ինչքան խակ է էդ աղջկայ հասկացողութիւնը
կրթութեան և սիրոյ մասին։ Պ. Կարինեանցը համա-
րելով էդ տեսակ խոտակցութիւնը բնականից դուրս, ա-
սում է ինձ՝ «Հշմարտասէր բանասարեղծ, եթէ ձեր խոտ-
քին հաւատացող լինի, այսուհետև մի՛ իրա աղջիկը կը
հաւատայ ուսուցչի խնամքը յանձնելու։»

Պատասխանում եմ պ. Հարցնողին, թէ ես յատկա-
պէս էն մարդով եմ էս անց.քը ներկայացրել, որ ծնողքը
միշտ նկատողութիւն ունենան իրանց աղջիկներանց վրա,
երբ որ յանձնում են նրանց ուսուցչի խնամքը, մանա-
ւանդ երիտասարդ ուսուցչի։ Իմ կարծիքով մայրը պար-
տաւոր է միշտ ներկայ գտնուել էն տեղը, որ տեղ
ուսուցիչը դաս է տալիս աղջկան։ Դա շատ անելը գիտեմ
Ֆ. Ինֆելդումը, որ տեղ ոչ միայն աղջկներանց, այլև աղջ-
կանց դաս տալու ժամանակը հայրը կամ մայրը կամ
մերձաւոր աղգականներից մէկն ու մէկը միշտ ներկայ է
գտնուում։ Դա կանոնը ստահպանում է էն տներումը
ուր միայն էն նպատակը, որ ուսուցչի և աշակերտի մի-
ջումը անվայելուչ բան չը ծագի, այլև արթուն նկա-
տողութիւն ունենալու համար, որ աշակերտը միշտ պատ-
ուաստած ունենայ իրա գաղերը, ուսուցիչը միայն ունենայ
իրա տուածին և պատմածին, խոտակցութիւնն առարկան
միշտ լինի բարոյական, ուսուցչի դիրքումը միշտ քա-
ղաքաւոր և բարի օրինակ, աշակերտի ձևերը միշտ պար-
կեշտ և խոնարհ, ուսուցչի տուած գաղափարները միշտ
առաքինական և կրօնական և այլն։ Էնից էս նպատակը
է կատարուած, որ աղջկներանց ինոպիսուտումը և պան-
սիոնները ունպատճառ ներկայ են գտնուում դաս-

տուն թեան ժամանակը ամէն մէկ դասատանը առանձին վերակացու Տիկին (կլանայեա դամա կամ պօպինեբկայ)։ Ընդ էս նպատակաւն է, որ երեխայի աներուամբ կարդում են աղջկերանց և տղերանց վրա առանձին վերակացու տիկին (մադամ)։ որ ունքաժան է աշակերտից թէ դասատուութեան և թէ ուրիշ ժամանակը։ Ուրեմն իմ ցոյց տուած ներկարագրութիւնով էս երբէք վնաս չեմ տուել քարեկիրթ երիտասարդ ուսուցիչներին, այլ միայն հաստատացրել եմ, թէ ծնողքը ինչ պարտաւորութիւն ունին իրանց զաւակաց ուսումնառութեան ժամանակը։ Մի՞թէ ս. Կարինեանցի հանճարեղ խորհրդովը, էն լաւ կը լինի, երբ որ ծնողքը վարձելով իրանց աղջկերանց համար ուսուցիչներ, ըստրելին յանձնեն նրանց խնամքը, և իրանք մնան անհոգ։ Կարծեմ, որ եթէ ս. Աբիսիոսի եղբէր խորհուրդը կատարեն ծնողքը, շատերը կարող են միշտանել, ըստ որում զանազան անուխիժ դիպուածներ միշտ կարող են պատահել։ Իսկ եթէ իմ տուած խորհուրդը կատարեն, էն ժամանակը համ իրանց ծնողական անպուհ պարտաւորութիւնը կը կատարին, համ իրանց նպատակին կը հասնեն, համ ուսուցիչներն էլ ոչինչ չեն կորցնել։

Իմ հատուածումը բաց 'ի գլխաւոր բնաւորութիւններից, ցոյց են տուած երեք ուրիշ բնաւորութիւնք էլ (Ղեորղի ծանօթները), որոնք իբրև կողմնակի յատակցութիւնք, ներկարագրած են հատուածի լուութեան համար։ Նորանցից երկուսը (Մինասը և Յոհաննէսը) երիտասարդներ են, որոնք են ուրախութեամբ ժամանակ անց կացնել, մեծարքներումը և հացկերոյթներումը երգել, հանակներ անել և բոլոր բազմականներին ուրախացնելով միշտ ըմբռում են հոգի ընդ երես։ Նրորդը (Ղնոմոնը) է խոհեմ, ծանրաշարժ, հեռատես և բազմախոհ մարդ, որոնցից բարեկամ էն երկու երիտասարդներին։ Նրանք

էլ լաւ ճանաչում էն Պէտրոսի հոգին և նրա մէջ ամփոփուածը։

Երբ որ Պետրոսը հաճեցնում է Սիմոնին պատկանել, նրանք սկսում են մատնակցել խօսակցութեան մէջ և ասում են՝

Յոհաննէս։

Պ. Սիմոն, մեզ էլ հարսանիքում էլ մեծցրէք, թէ չէ։

Սիմոն։

(Ծիծաղելով) Դեռ ո՞ւր է հարսանիքը։

Պետրոս։

Կըմեծցրի, կըմեծցրի։ Ամէն հարսանիքը ամբարից ոսկին կըլինի, նա կըմեծցրի ձեզ։

Յոհաննէս։

Ուրեմն, Տէնայ Պետրոսիչ, քացախ խմիր, որ իշտահդ էլ բացուի, ձէնդ էլ։ (Ձեռները ձմռելով) լաւ հարսանիք կ'ուտենք, լաւ քէֆ կանենք։ Բայց, Նակուլիչ։ ինչպէս արա՞ որ մեզ քանի սիրուն կինանիք էլ, աղջկերք էլ ընդունեն հարսանիքումը։ Թէ չէ՞, մինչև որ մեր աշքին լուս չըգայ, թերան բաց անել չենք կարող։

Նինա։

Էհ, հա՛, Նակուլիչ, Ասուած սիրես, առանց աղջնակներու չըթողնես մեզ։ Մէկ էլ որ, ինչքան կարելի է, պառաւ կինանիք քիչ ընդունեն։ Կատարեալ պատիժներ են մեր գլխին։ Էնց որ մարդ ուզում է մէկ հանաք անել, մէկ լաւ խօսք ասել սիրուններին՝ էն օրհնածները խակոյն մէջ են ընկնում ու մարդու խօսքը բերանումը ցամքեցնում են։ (երգում է Յոհաննէսի հետ միասին)։

Ինչպէս տարէի ծաղիկները մարդու սիրան են բաց անում, էնպէս էլ միշտ սիրունները մեր հոգին են զարթեցնում։ Նրանց համար մեր երգերը էշխով համով են ընում, մանաւանդ երբ նրանց մէջը ուսեալներ են գտնուում։

Բայց երբ պատաս կնանիքը մեր առաջին քաջալում են, մեր սիրտը շատ կոտրվում է, ծընկներս թուլանում են. մեր քուռ ըստղերից էլ ամէն տեղ պատասները լցվում են,

Կարտոֆիլի նման գետնից ամէն տեղ ըքանվում են։

Ընթերցող։

(Հանդարտ ձևով) Ոչ, եղբայրք, էդպէս չէ... Ինչպէս որ Տեր Աստուծի համար հարկաւոր էր Ադամը, ինչպէս էլ ջահել աղջկերանց համար հարկաւոր են պատաս կընանիքը։ Ապրած անպակաս անի պատաս կնանիքին մեր աղջկերանց գլխից։

Բայց պ. Կարինեանցը իրա ճշմարտասէր խղճմտանքովը դուրս չի գալիս Ադամի պատասխանը, այլ միայն դուրս է գալիս երիտասարդների երդը, էն էլ իրա ուզածի պէս վերախանելով, ըստ որում ո-ուէանիր բառի տեղ գրել է դէպ ուղղ։ Այդպէս մաքուր է նրա խղճմտանքը։

Այս տեղ իմ նպատակն է գրաքննչին խառնել օգտակարի հետ, մէկ կողմից ցոյց տալ երիտասարդական, միւս կողմից բաղմախորձ և հանճարեղ մարդոց դատողութիւնը. առաջ ցոյց տալ սխալ կարծիքը, յետոյ ճշմարտութիւնը ուղղել և խրատել։ Բայց պ. Կարինեանցը ինչպէս ամէն տեղ, էնպէս էլ էս տեղ ցոյց տալով միայն մէկ կողմը, հարկաւոր չի համարել ցոյց տալ միւսը, ըստ որում եթէ երկուսն էլ ցոյց տար, էն ժամանակը գրքերը պարտիրս բան չէր ունենալ։ Այսպէս է տհա՛ նրա քարոզած ճշմարտութիւնը և առանց կրքի խօսելը։

Իմ հասուածի երրորդ զորձողութեան առաջին տեսարանումը ցոյց է տուած, թէ նշանած Աղիկը գալիս է իրա անելքանց տուն և խօսում է իրա նշանածի հետ։ Խօսակցութեան մէջ տեղեկանալով թէ իրա նշանածը մոտդիր է պատիւներց յետոյ էլ շարունակել ուսումնառութիւնը և լսելով նրա խօսքերը, թէ «Հիմիկանց

դէն ձեր ուզածը իմ ուզածը կը լինի, ձեր խօսքից ես երբ-
բէ՛ք չեմ դուրս գալ։ «Նիկոլը ուրախանալով՝ լսեց Տարսէսի
հնարքանդ (ուրեմն և հաղուագիտուն) կնիկ է Ճարտար, ասում է՝
ապրակ հեռու ձեր բերնից դէպի խօսքերը դուրս եկան,
ասուն կարող եմ ձեզ համբուրել»։ բայց նոյն ըստ էին
աղջկայ հայրը՝ որ թատ էր կացած դրան եռանը, նեղս է
վազում և ասում է՝ «Ա՛յ, չէ՛, մուլան տուէ՛ք, լա էդ
«թաւուր բանիր չեմ սիրի»։ Նիկոլը ամաչելով դուրս է
գնում։ Թերակիրեթ և խակամիս Ադամը ասում է իրա
հօրը՝ «Ա՛խ, պապա։ ինչի՞ էդպէս անբաղդաւորի վար-
«ուեցար։ ի՞նչ էիր հոգում, թէ՝ ոչ պաչ էր ասել, լսամ
«անշնաչ արծա՞ծ ենք։» Այրը խրատում է նրան և ա-
ասում է։ Թէ նրա դատողութիւնը սխալ է, թէ պաչը
վատանգաւոր է, օրինակ է բերում ալէծը և բամբակը։

(1)։ Պարինեանցը ասում է, թէ էս տեսարանը անբա-
ղդատելի է, անպարկեշտութիւն է։ Տեսանենք, թէ ի՞նչ-
քան հասարակաց է նրա դատողութիւնը։

Նիկոլը իբրև հին ծանօթ և ուսուցիչ Ադամու և
հիմի նրա օրինաւոր նշանած, լսելով էն պատուական խօս-
քերը, շատ ուրախացաւ և կամեցաւ համբուրել էն բե-
րանը, (էն էլ ո՛չ թէ օտարի, այլ իրա նշանածի բերանը),
որ էն անլին խօսումնքը արտասանց։ Դա տեղ ի՞նչ
զարմանալու բան կայ։ Մի՞թէ նշանածների համբոյրը
անպարկեշտութիւն է։

Ազարաւոր օրինակներ իլել են և կան թէ՛ Հայոց,
թէ՛ Ռուսաց և թէ՛ ուրիշ ամենայն ազգաց մէջ, որ երի-
տասարդ տղերքը ամիսներով և երբեմն տարիներով
նշանած մնացել են, միշտ երթևեկութիւն են ունեցել
աներանց տուն և միշտ համբուրել են իրանց նշանածնե-
րին։ Դ՚ն տեղ աղջկերանց ծնողքն էլ չեն արգելել էդ
օրինաւոր և անմեղ համբոյրը, ըստ որում մատանիքը տա-
լու ժամանակը տղան բազմութեան առաջի կնքում է

նշանակել շրթունքի վրայ առաջին համբույրը։

Իսկ իմ գրուածքումը շատ պարզ է ցոյց տուած, թէ աղջկայ հայրը դոլով հին ժամանակուայ մարդ և համբոյրի մասին ունենալով հին ժամանակուայ հասկացողութիւն, էն սովորական և օրինաւոր համբոյրին էլ կու

Որը է էս տեղ անպարկեշտութիւն և անբարոյական նաւթիւն, որ քարոզում է պ. Կարինեանցը։ Ի՞նչ պատ-

---

նաւթեանքը դուրս է գալիս, թէ պէնջը կամ քոմքուլը ահ ունէ. այլ ոզորմելին լաւ չի հասկացել, թէ էն տեղ բամբակը և պէնջը ջուկ ջուկ ենթակայի պէս չէն վերը առած, այլ առած է՝ պէնջը քոմքուլի մօտ—շուտ վառուելու ահ ունէ, ցր երբ որ պէնջը մտիկ է գանուում բամբակին, էն տեղ շուտ վառուելու ահ կայ, երկիւղ կայ (присутствіе искры близь хлопчатой бумаги угрожаетъ опасностью вспышки). լաւ չի հասկացել ոզորմելին, թէ ահ ունէ բայը էս տեղ գործող չէ, չի նշանակում питаетъ страхъ, имѣетъ страхъ, երկիւղ ունի կամ զգում է, այլ նշանակում է վառուելու է, ինչպէս առում են՝ էնդի ահ ունէ (ցր կենալու). էս տարը ահ ունէ (ցր. բլէրլու), և այլն։ Խակամիս դատողութիւնից երևում է, որ Մի հրդատը աշակերտ է, ուրեմն նրա գրութեանը պատասխան տալ հարկաւոր չէր. բայց հնշաութեամբ կարելի է հասկանալ, թէ նա չէր համարձակուել տպած հրատարակել էդպիսի գրութիւնը առանց ենթարկելու իրա վարժապետի տրատգրութեանը։ Եթէ էս ենթադրութիւնս Հշմարտանման է, ուրեմն վարժապետն էլ չի հասկացել, ըստ որում հին տէրութեամբ է վարուել, ցր կամեցել է դարդակ վերը-ծո-ութեամբ հասկանալ։ Իսկ եթէ էդպէս չէ, ուրեմն աշակերտի անհնազանդութեան համար վարժապետը պարտաւոր էր պրոցեսն պատժի տալ նրան, որ նա միւսանգամ իրա դէմից մեծ բանի վրայ չը համարձակուի հրապարակական քննութիւն անել,—ինչպէս առում է Ալեքսանդրին՝

А если школьникъ онъ—такъ розгами его!

Իսկ եթէ նա աշակերտ է—ուրեմն պէտք է ծեծել նրան։

Հատաւ է կարծում նա, թէ էս խօսքերը չի կարելի ասել լաւ ընկերութեան մէջ։ Ո՞ր բառն է էս տեղ հերքելին և անպարկեշտը։ Մի՞թէ ս. Կարինեանցի կարծիքով Գրիբոյեդովն էլ չը դիտէր քաղաքավարութեան կամ պարկեշտութեան կանոնները, երբ որ նա ուզում էր լաւ ընկերութեան, այլև ստոր աշխարհքի մէջ, որ տեղ շատերը անգիր դիտեն նրա հռչակաւոր горе отъ ума հեղինակութիւնը, նկարագրում է հետևեալ տեսարանը և խօսակցութիւնը (տես 7, 8 և 9 երես։)

Լիզա։

(աղախինը յանկարծ զարթնում է, վեր է կենում աթոռի վրայից, մոխիկ է տալիս դէս ու դէն.) Լուսացել է... Ա՛խ, ինչպէս շուտ անց կացաւ գիշերը... Երբէք երեկոյին խնդրեցի, որ ինձ արձակեն քնելու, չը թողին։ Սպասում եմ, ասում է, սիրելիանիս, ուրեմն պէտք է աչքերդ վառած պահես։ Իմի մին փոքր թմրեցայ, — լուսացաւ... գնամ ձէն տամ... (ծնծում է Սոֆիայի սենեակի դուռը.) Պարոնայք, էյ, Սոֆիայ Պաւլովնայ. ձեր խօսակցութիւնը ստոր գիշեր քաշից... Հառացել է՞ն... Ա. լեկսէյ Ստեփանովիչ. Ա. ղջիկ պարոն... Են էլ վախենում... (հեռանում է դրան մօտից.) Ա՛յ քեզ անկանչ զօնատ... վայ թէ աղան գայ, լ՞ինչ անեմ... դժուար բան է սիրահարուած աղջիկ պարոնի մօտ ծառայութիւն անելը. (կրկին մօտենում է դրանը) Էրլիք է, բաժնուեցէ՛ք... Ա՛ռաւօտ է... լ՞ինչ...

Սոֆիայի ձայնը. Ռանի՞ սրհաթն է։

Լիզա. Տան մէջ ամէնքը վեր են կացել.

Սոֆիայ (սենեակից) Ռանի՞ սրհաթն է։

Լիզա. Եօթը, ութը, ինները։

Սոֆիայ (սենեակից.) Ստոր ես խօսում։

Լիզա. Ա՞խ անիծած սէր... լում էլ են, չեն կամենում հաւատալ, եայլն։

Ոչ ապաքէն էս տեսարանը և էս խօսքերը իմ գրածներից հաղարապատիկ աւելի համարձակ են։ Սրանց հետ համեմատելիս իմ գրուածքս կարելի՞ է ասել, թէ անպարկեշտ են կամ անբարոյական։ Ոչ ապաքէն էդ ասելիքը պ. Կարինեանցը պարզ ցոյց է տալիս, թէ չի տեսել լաւ թէատրոնները և չի հասկանում էն տեղի խօսակցութեան հոգին, որի նպատակն է միշտ գեղաշուխութիւն։ Դարձեալ ծուռն է մեկնում իմ պ. Կարինեանցը ամէն բանը, մինչ որ նրա գնացքը դուր չի գալիս, կամ մինչ միջումը կամենում է պարտութիւն բան դանել։ Խակ եթէ նա անպարկեշտութիւն է համարում Ղնամու առած խօսքը «մինչ էլը հոգում, թող պաչ էր արի, խօսք նշնած պրծած ենք,» — շատ սխալւում է, լաւ որում Ղնամուն ես ներկայացրել եմ Խերուբէլի աղջիկ, որ միամտութեամբ առում է էդ խօսքը, և հենց էդպիսի ցոյց եմ տուել նրա խակամտութիւնը, որի համար նրա հայրը լաւ խրատում է նրան ասելով, թէ նրա խելքը դեռ բան չի կարում։ Մի՞ թէ չի տեսնում պ. Կարինեանցը, որ էդտեղ ես պատկերում եմ Ղնամու ծաղրելի կողմը, որ նրա օրինակը խրատ դառնայ ուրիշ ջահիլներին համար։ Բայց ի՞նչ խօսեմ պ. Կարինեանցի հետ, երբ որ նա ամէնքս ճշմարտութեան վրա էլ աշխատում է մեր քայլ, և իրա նպատակին հասնելու համար դուրս գրելով իմ հատուածի կտորները՝ ոչ միայն միտկանել է, աւելացրել է բառեր և շարքեր, այլև չի ձանձրացել ասել պարբերութիւններ տեղից բանից։ Դարձեալ նա գրում է իմ բերնից էն խօսակցութիւնը, որի մէջ առած է, երբոր թէ մէկ հայ մարդ քահանայ է ուզում մէկ թաւադի տօա և առաջարկում է նրան իրա աղջիկը առնուանելու։ Օրինակելի՛ բան է, թէ ինչի՞ համար միտկանք ասելու, նա չի վեր առել և չի գրել իմ առունից մէկ նար խոյտառակ երգին։ Կարծեմ, որ էդպիսի աւելի կամ-

ըստ էր հանել իրա նպատակին, եթէ զոնուէին մեր ազգի միջումը նրան հաւատացող մարդիկ։ Բայց երևի, թէ էդպէս անելը աւելի հեշտ է համարել իրա համար, քան որում նոր բան գրելու համար շատ մտածմունք և համառութիւն կը հարկաւորուէր։

Պ. Կարինեանցը խօսելով Թէատրոնի վրայ (87 երես) ասում է՝ «Ունք (՝, ինքնը պ. Կարինեանցը) զիտունք և էլ ճոնուշնոփ (միտանուկ ասելոյ ճնուշնոմ էնոփ). Թէ ամբ-քան և ամբակոխ օգուտներ ունին այսպիսի պէոտրոններէրը... բայց տարաբաղդաբար մեր Թէատրոնը զուրկ էր բոլոր նպատակներից»։

Այս պարբերութեան մէջ խորհրդաւոր և բացահայտաւոր Կարինեանցը նախ՝ խառնում է Լէոտրոնի և պէոտրոնի նշանակութիւնները և կարում ցոյց է տալիս, թէ ում. էլի հակադրում նրանց զանազանութիւնները։ Ֆ. Կարոնի նշանակութիւնը նա բացատրել է մի գիրքում, իսկ պէոտրոն ասում է ամէն բնական և արհեստական պատկերը, անանիրա առարկան, մի կենդանուն մի ժամանակուն կատարուած գործը։ Թէատրոնական բեմի վրայ պէոտրոն ասում է ամենայն յատկացեալ երևոյթը իրա նկարներով, դերա Թեատրը և գործող անձներով։ Բայց այսպէս պէոտրոն բառը գործ ածել Լէոտրոն բառի տեղ նշանակում է ստորագնել Թէատրոնի վրայ և այնիրա նշանակութիւնը, բայց որում խորհրդաւորների (Չարքարների) կարարելն է, կարիքների կամ այլնի խառնելն է պէոտրոն դ'ասում։ Նա երկրորդ՝ անհիմն և ասուց ուղիղ գաղտնի Թեան է ասում, Թէ Թէատրոնը զուրկ էր բոլոր նպատակից, բայց որում անկարելի և բնականից դուրս բան է, որ Թէատրոնը վրա նպատակ ունենայ։ Նա երբէք չի կարող զուրկ լինել բոլոր նպատակից, այլ վրա նպատակ ունենալ, եթէ ասել ուզենայը Ֆ.ը Ճանաչում է նրա նպատակը բոլոր։ Իսկ եթէ ցեր Թէատրոնը զուրկ էր բոլոր

նպատակից, առա ուրեմն ուներ չար նպատակ, քան որում մատանց նպատակն Լեհաստան չկայ։ Լեհ ուներ չար նպատակ, ուրեմն ա. Կիսիկոսը պատասխան էր ցոյց տալ, բայց ցոյց չի տալ։ Այս տեղ երևում է, որ նա էրկիրն ամրապատ խառնել է բաներին նշանակությունը, ցի մարդուն իրամիցել է տալ, լեհ իմ հաստատը զուրկ էր բարի նպատակից, իսկ գրեթե ժամանակը առանց զանազանելու տալ է՝ Լեհաստանը։ Ամ է այսպես և լեհ այնպես ես պատասխանում եմ ցոյց տալ էս տեղ երկուսի նպատակներն էլ ընդհանրապես գաղտնապահ առջի։

Ամենից առաջին անոյշին Լեհաստանի միակ և ամենին յայտնի և ակներև տեսանելի նպատակն է՝ Լիքելիպատակ Այրի համար տալին մեկ քանի անգամ նեղկայացնել Այոց լեզուս զանազան Լեհաստանական հատուածներ մարդկանց Լեան նեղկոյ քաղաքական կեանքից առած պատկերներով, և Եստրալ տալիս և միջոց տալ նրանց մեկ քանի երեկոյ հատուցած ընկերությունների մեջ իրանց ընտանիքի, բարեկամների և ծանոթների հետ ժամանակ անց կացնել ազնիւ զուարճությունով, և քաղել էն բարոյականությունը, որ պարունակուած է հատուածների մեջ։

Ամեն ազգասիրա Այոց տեսնում է էս նպատակը և միհոյում է պա ազնիւ և օգտակար լինելը։ Որա պարզայցն էն է, որ ամեն ազգասեր Այոց ոչ միայն աչք հառոտալ ցանկանում է նեղկոյ գոնեն խաղաղությունն ժամանակը, այլև մեկ չտալով ա. Կարինեանցի և նրա հմանների գրածոցը՝ ամենայն հնարքներով լեհ փորձով, լեհ խորհուրդներով և լեհ գործակցությունով, աշխատում է օգնել էդ նպատակին և Լեհաստանի յառաջդիմությունը, և Եստուր հոգաս նորան մեր ընտիր ազատությունները ամենայն գրամոնան ընծայությունով Լեհությունը էարդարացնի Լեհաստանական բեմը և գահիկը, իսկ նրան-

ցից երկուսը բաց յայտնեմանէ յանձն առին բոլոր հո-
գատարութիւններն ծանրութիւնք, զոհելով իրանց ժա-
մանակը, աշխատութիւնը և փողը։ Դանդաղին թէ ինչ-
ըստ ոմանց անդամ կատարուելոյն իմ բնեմանէն հատ-
ուածները և ուրեմն անդամն էլ դադարելը էնքան լիքն էր
քաղաքականներով, մինչև որ շատերը նեղացան առանց փոք-
րութիւնից։ Բայց այդպիսիքն՝ Իշխանք, Ազգատարքք,
Ամիրաներ, Պատուաւոր Հարգուցեալք, Ամենա-
կանք, Տիկնայք և Օրիորդք, ներողամիտ գտնուելով ինչ
ինչ թերութիւններին, մեծ հրճուանքով գովեցին և միշտ
գովում են թէ նրա ակներև յառաջադիմութիւնը և քա-
րեկարգութիւնը, թէ հատուածները և թէ գործող ան-
ձանց ընդունակութիւնները։ Միայն որ Պարինեանցն է՝
որ առում է, թէ Ինչպէս դարձ էր Բարի Դպրոցից։

«Մինչև տարբ կամ Մօտիքուլ» կամեցիս — մոռանալն
նպատակն է, (ինչպէս որ ամէն այցելուքը տեսան և ինչ-
պէս որ ամենայն մարդ կարդալով տպածը կարող է տես-
նել) ցոյց տալ, թէ ի՞նչքան վնաս է մօտիքուլներին
հաւատալը։ ի՞նչ տեսակ շահախնդիր մարդիք են եղ գոր-
ծում պարապողները։ ի՞նչպէս և ի՞նչքան տաւտեր են խո-
սում նրանք իրանց օգտի համար։ ի՞նչպէս են գովում
նաղդելու ապրանքները։ ի՞նչպէս հիշատակում են նրանց
խոսքերից դիւրահաւատ և անփորձ մարդիքը, մանաւանդ
կանայքը։ ի՞նչպէս թերի քաղաքակրթուած կանայքը
մոլորւում են զինուորական ատենադպրների էպօլետ-
ներից։ ի՞նչպէս անփորձ մարդիքը տալիս են իրանց աղ-
ջիկը անծանօթ օտարազգաւոր ատենադպրի։ և ի՞նչ,
բան մեծի մասին վնաս, հեռանքներ են յառաջանում
եղելոյն ամուսնութիւնից։ Սրա բարոյականն է՝ զգուշանալ էս
տեսակ դիւրահաւատութիւնից և չը խաբուիլ մօտիքուլներից։

Կարծեմ, որ բարեմիտ մարդը չի տալ, թէ էս նպա-
տակները վատ են, կամ թէ էս հատուածը զուրկ է

բարի նպատակներից։

«Ի՞նչ ուշադիր, հրաշք էին» կասեցին — մոռացվելի նպա-
տակն է՝ ցույց տալ, թե ինչպես են վարում բարդագույն
անկիրթ և թերակիրթ ազգերը, քանի հաստատագրված
ունի երկրորդը կրթություն տալուն, քանի է հասկացող նա բա-
ռարան, ինչպես ուղիղ դատողություն ունի մարդ բան կրթված
ազգերը, քանի և ինչ հնարքներ է գտնում նրանց
հոր ծանոթ անպաշտոն առանձնությունն են երկու ազգերը
մարդու տալու հասար, ինչպես վերջապես էլ. անուսուցիչ մարդու
հետ ծանոթանալ ունենալը, քանի նրա խրատը ստանալը
երիտասարդին ցույց է տալիս են երկու ազգերից սերունդը
և նշանակում է նրա հետ, յուրաքանչյուրի դիշերը խա-
բում է և պատկում է նրան ազելի հետ։ քանի նրա
մեկ օրումը նշանակում է և պատկում է թերակիրթ ազ-
ջկան իրա ուսուցչի հետ։ Երբան գործարարությունից հետ
լինում են զանազան տեսարաններ էլ, որոնք իրարև կոզմ-
նակի յարակցությունք պատկերացնում են զանազան բնա-
ւորություններ հատուածի լուսեան համար։ Սրա բա-
ղարյանն է՝ տալ ։այոց ազգերանցը կարևոր, հիմնա-
ւոր, ազգասիրական և ազգային կրթություն, ցույց տալ,
թե երիտասարդ տղերքը պարտաւոր են զգոյշ կենալ էն
անպաշտոն առանձնաւորի նման ծանոթներից, չհաւա-
տալ նրանց ժիզուխական խոսքերին և կերպարանքին,
պատկերը առարկայի մեջ շրջանկատ լինել։ Ցույց է
տալիս, թե ի՞նչքան ծաղրելի են էն տեսակ ազգերը,
որք չ՚ունենալով հիմնաւոր կրթություն, համարում են իրանց
գլուխը ուսեալ, թե ինչքան հարկաւոր է ծնողաց համար ան-
քան հոկողություն ունենալ իրանց ազգերանց ուսումնաւորության
ժամանակը, ինչպես հարկաւոր են պատաւ կանոնը չտալ
ազգերանց բարոյականության համար, և ընդհանրապես խրա-
տում է էն չ՚անել, ինչ որ քաղաքականության մեջ անպատ-
շաճ և վատանգաւոր է, և ինչ որ բեմի վրա պախարակվում է։

Կարծեմ, որ բարեմիտ մարդը և Հայը չի ասիլ, թէ էս նպատակները վատն են, կամ թէ էս հատուածը զուրկ է բարի նպատակից։ Սենակ պ. Կարինեանցին է, որ, չը գիտեմ, թէ ի՞նչ պատճառաւ, ուշ միայն ասում է, թէ զուրկ էր բարի նպատակներից, այլ և ամենայն ուժովը և բոլոր ջանքովը յարձակւում է էս հատուածի դէմ ասելի, քան թէ միւսի դէմ։ Որանից ես եզրակացնում եմ, թէ կարելի է, որ նաէս հատուածի մէջ ոչինչ նեղանալիւն ըլնի տեսած։

Նա ասում է (37 երես)՝ «Սենք (այ պ. Կարինեանցը) բնաւ չենք կարող համաձայնիլ այն մարդկանց հետ, որանք ասում են, թէ ի՞նչ կայ, էսօր վատը կը լինի, հետոց նրանից լաւ կ առաջանայ, իսպառ չը ընելուց խօսելը է։ Ա. յս կարծիքը ասում է, այս կարծիքը կորստական է (քարոզում է պերիմատ կրիտիկոսը)։ լաւի կերպարանքով վատ բաների առաջանալը խոկալէս լաւ բաներ առաջացնելու միջոցները խլել է։ վատ բանից լաւ բան չի յառաջանալ։ լաւ է իսպառ չը ընելը, քան թէ վատի գոյութիւնը, յուսալով, թէ նրանից լաւ բան կ՚առաջանայ։»

Այս դատողութեան ձևնուն թիւնը ամէնքը տեսնում են։ Ամենայն գործ իրա սկզբում ունենում է պակասութիւններ, բայց ոչ մէկ մարդ էն պակասութիւնների համար չի թողել գործը, այլ աշխատում է ուղղել և կատարելագործել։ Երբակից բոլոր գործարանները իրանց սկզբում իլել էն շատ անկատար և նրանց մէջ շինածները կամեր և վատ։ բայց ոչ ոք չի ասել, թէ վատ թեան պատճառաւ պէտք է քանդել գործարանները։ Ամենքը փորձալ և խելքալ գիտեն, թէ լաւ է քիչը, թերին, վատը և անկատարը ունենալ և օր ըստ օրէ լաւացնել, քան թէ խակի չունենալ։ Լաւ է մէկ արուծ աքատ ունենալը, քան թէ բնաւ չունենալը։ Այս պատճառաւ շատ խելօք դատողներ է պարտադրւում էն մարդկերանց խօսքերի

մէջ, որոնց հետ էին համաձայնում ալ. Կարինեանցը։ Փորձը
շատ անգամ ցոյց է տուել և հենց մեր նորածին թեատ-
րոնի վրա էլ ցոյց տուեց տարբեր դատողութեան ուղղութիւնը
և ալ. Կարինեանցի դատողութեան անհիմնաւորութիւնը։
Դ՛ուրեստ առաջ մեր թեատրոնը ունէր շատ պակասու-
թիւններ, հիմի ազգասէր ։ այդպէս գործակցութեամբ բա-
ւականին բարեկարգուել է. առաջ չ՛ունէր դեռ ոչինչ հնարք,
հիմի ունի բաւականին. առաջ մի քանի անհետաքրքիր
մարդիկ բամբասում էին նրա պակասութիւնները, հիմա
շատ բարեմիտ մարդիկ յայտնում են լիարժէք շնորհա-
կալութիւն։ Արդեն ամէնքը տեսնում են, որ պակա-
սութիւնը և վատ թեատրոնից առաջանում է օր ըստ օրէ
լաւը, և հիմի ամէնքը վկայում են, թէ մեր թեատրոնը
էլ առաջանալու վրայ շատ և շատ լաւացել է, և էլի
առաջ կը լաւանայ։ Գասոնդ և ազգասէրներ օգնու-
թեամբ։ Դարձ, թէ ի՞նչ հիմարներ վրայ է հասնում
ալ. Կարինեանցը իրա դատողութիւնը, թէ՝ զ. քնարեն իրանը
բարեմիտ ընթերցողներին։ Մի այն ես հարցնում գիտեմ, որ
հարկաւոր թեատրոնի լինելութիւնը անպատճառ հարկա-
ւոր է մեր հայերին և պարծանք է նրանց համար։ Դա-
քան ժամանակաւոր չունենալն էլ բաւական ամօթ էր մեզ
համար, բաւական էր չունենալու պատճառաւ։ Դերա-
պատները համարում էին մեզ ժամանակից յետաւորու-
թիւնից և քաղաքակրթութիւնից յետ մնացած, երբ որ
Ֆրիչելիի ։ այնքան շատերը և մանաւանդ ընտիր՝ ը
և առաջնակարգները միշտ մեզ դարմ։ Դերապատ-
ղութիւնը տեսել են և տեսնում են նրանց հաւ-բուծց
թեատրոնները։ Ինչի՞ պէտք է մենք չունենանք մեր տես-
հարկաւոր թեատրոն. թող լինի իրա սեղանը պակասաւոր,
անպէտ. թող չունենայ մեծամեծ միջոցներ. թող իմ
հասուածներն էլ չլինեն, իմ ասածը թեատրոն էլ
չլինի. թող թեատրը ալ. Կարինեանցի ասածը, հաս-

ուածներն էլ թերութիւններ ունենան, — միայն թէ ունենանք թէատրոն։ Մենք ներողամիտ կը գտնուենք թերութիւններին, յոյս ունենալով որ օր ըստ օրէ կը լաւանայ։ Լաւ թէատրոնը շէնի տակը, իմ կարծիքով, ճշմարիտ ազգասէրի խօսք չէ։ Մի՞թէ տխուտալն չէ՞ ընդդիմ, եթէ հայոց ազգասիրածանք ձեռնարկութիւնը, որի վրայ մեր ազգասէրները թափել են իրանց քրտինքը, մոխել են իրանց ոսկին և էնդրսով հաստատել են նրան ներկայ վիճակին, քանդուի, էն էլ ո՞ւմ, — ս. Կարինեանցի դատաստանով։

Ինչպէս ասացի, թէ մի՞նչ յատկութիւններ պէտք է ունենայ հիմնարկը։ Հիմի քննենք, թէ մի՞նչ հայեցուածքով է մարդ տուել ս. Կարինեանցը իմ հատուածների մասին և թէ մի՞նչպէս է հասկանում դա էն առարկաները, որոնց անունները յիշել է իրա գրուածքում։

Նօմ-էֆէքտի առարկան և նպատակը էն չէ, որ բարձր ազգին կամ ծաղը ածի հատարակութեան պակասութիւնները (1), այլ կինդանադրի կիանքի անյարմարութիւնը ցնդատելի հետ, լինի պատշաղ դատն զգացողութեան՝ թէ մի՞նչի համար ստրացել է մարդկութեան արժանաւորութիւնը։ Ինչպէսի նպատակը և առարկան է ծիծաղելի-ատելին կիանքի վրա, անոյշին կիանքի վրա, գեղեցատնական կիանքի վրա և հաւաքել դրամոյի սեղանի վրայ բունդը։ Սա ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ առանց պատրաստութեան ատացուածք (էկսպրոմտ) կիանքի ո՛ր և իցէ դիպուածի վրայ։

Էն անձինքը, որոնք ստեղծել է Մոլիերը իրա կոմեդիաները, մատցածին չեն, այլ դուրս նշխած են բնութիւնից իրանց ստղ հատակովը, հանած են գործնական

---

(1) Հոելին. Ռեթին. Հ. 1. երես 31, 317, 03.

կեանքի յառաջից։ Կարծեմ, որ էս կանոնները պահ-
պանած ընեն իմ կամեցիս — վոլեվլենները։ Իսկ եթէ
ոչ, ապ. Արիստոտել էտունք էր պարտաւոր ինձ ցոյց տա-
լու, եթէ հասկանում էր թէ ի՞նչ են նշանակում կրի-
տիկ, կամեցիս և վոլեվլել։ Իմ ստեղծած անձինքն էլ
չեն բաղկացնում հատարակութիւն, այլ մին քանի մար-
դիկ իրանց անոյշին կեանքումը։ Ուրեմն եթէ ես ասել
եմ, թէ հատուածիս նիւթը առած է անոյշին կեանքից,
ապ՝ թէ էդ կը վերաբերի ընդհանուր կեանքին, ինչպէս
աշխատում է մեկնել ապ. կրիտիկոսը։ Ի՞նչ իրաւունքով
է առում նա, թէ էն արատները, որոնք ես ցոյց եմ տուել
մին քանի ստեղծած անձանց վրայ, ես վերաբերում եմ
բոլոր ֆոյց ազգին կամ բոլոր Ֆրանցիզացի ֆոյց։ Էս
ի՞նչ զառապարութիւն է, ինչի՞ վրայ է հիմնած։ Ամեն
թեատրոններումը տեսնում ենք ներկայացրած զանազան
կարգի մարդիկ, մինչև անգամ թագաւորը, իշխանը, նա-
խարարը և այլն, որոնց վրա ցոյց են տուած ընում զա-
նազան յանցաւորութիւններ։ Մի թէ կարելի՞ է ասել,
թէ հեղինակները էն յանցաւորութիւնները կամեցել են
վերաբերել բոլոր թագաւորներին, իշխաններին, նախա-
րարներին և. կամ բոլոր ազգին։ Եթէ ես ցոյց եմ տուել
բեմի վրայ մի կամ երկու անգամ կատաղի ընկած, մի՞
թէ էդ կը նշանակէի, թէ բոլոր ֆոյերին եմ անուա-
նում կատաղի։ Մի՞ թէ ուրիշ բաղաքներումը կամ ազ-
գերումը չկան կատաղի ընկածներ։ Եթէ ես ցոյց եմ տուել,
թէ նրա տունը մի կանչիկը ցոյց են տուել հնչա-
նելու ժամանակը, իսկ մինչև էլ զարկել են, մի՞ թէ էդ
կարելի է մեկնել, թէ ես ամէն Ֆրանցիզացուց եմ ըն-
ծայում էս գործը և մի՞ թէ ուրիշ երկրներումը կամ
բաղաքներումը չի պատահած էդպիսի գործ։ — Դատողը
զառապարութիւն չէ՞։ Էս տեղից չի՞ երևում մարդու կիրը։
Ուրեմն, եթէ էդպէս է, թող ասատոյ ապ. Կարինեանցը

իրա վՀիւռք՝ թէ կրօտՀ խօՀԼԷ ամարէ Տարդաս գարձ է։ Եթէ ա. Կարինեանցը թագցնելով Հշմարտութիւնը. ասնդում է, թէ հդպիսի բան չը կայ, մի՞ թէ կարծում է, թէ ֆ. ինֆլիպէցիք Հշմարտութիւն թագցնող մարդիկ են և չեն վկայել, թէ հդպիսի անցքեր պատահել են ինչպէս ֆ. ինֆլիզումը, հնարէսել ուրիշ. քաղաքներում։ Կրկնում եմ—въ семьѣ не безъ урода (զիրդատան չըկայ առանց պակասաւոր անձին։) Եթէ ես առանց մատնանիշ ընելու վեր եմ առել մի մարդու տունը իմ հատուածիս համար առարկայ և նկարել եմ հն տան պակասութիւնները, մի՞ թէ հդ կը նշանակի, թէ բոլոր ֆ. ինֆլիզցոց տները հդպէս են։ Եդ շատ անհիմն և ծուռ մեկնութիւն է։ Զդի պակասութիւնը մեղմաբար, հն էլ միտակ իրան, ցոյց տալը նշանակում է ցանկութիւն, որ հն պակասութիւնը վերանայ, և հս ցանկութիւնը շատ գովելի է. իսկ ազգի պակասութիւնը նրա աչքի առաջը թագցնողը կամ զովողը է թշնամի ազգին և արժանի է հն ապտակին, (1) որն որ Ներսես տուց թարգմանչին, որ իրա թարգմանութեան միջից դուրս էր հանել Ռուսաց ազգի համար գրած պատկաութիւնները։

Բելինսկին ասում է, թէ Կրիտիկոսը պէտք է ծանօթ լինի ժամանակակից հասկացողութեանցը, առանց հսրը նա չի կարող և իրաւունք էլ չունի ոչ մի բանի վրա գատաղութիւն անելու (Հատոր 1. երես 254.)։ Վերոյգրեալ բացատրութիւններից պարզ երևեցաւ, որ ա. Կարինեանցը չունի ոչ միայն ժամանակակից, այլև հնացեալ անդամ հասկացողութիւն՝ ոչ թատրանի, ոչ կոմեդիայի, ոչ վոդեվիլի, ոչ օպերայի մասին. չունի ոչ

---

(1) Հոդին. Բելին. հատ. 1. երես 227, 248 և 500.

մեկը էին յուրաքանչյուր թունդների, որոնք ալէոբ է անվանում կրե-
տիկատը, որովհետև կրետիտատը ուստաձեռ չէ առել և լու-
սաբերում. քաղաքներում մեն չէ իրել։ ուրեմն շատ սխալ-
ուել է, որ վատահացել է հնագիտի առաջարկի վրա. քան-
դում թունդ անել, որ իրան բոլորովին ծանոթ չէ։ շատ սխալ-
ուել է, որ իրա գրաբարի անունը դրել է հրէաբէ-հոն գրա-
ռաբէ։ Ա՛ռա կարծել է, թէ թէատրոնական հատուածնե-
րի վրա կրիտիկ գրելն էլ հնարքա հիշատ է, ինչպէս որ
մեկ Հատի վրա, կամ քերականական սխալների վրա
գրելը։ Բայց եդ կարծելը ներելի է նրան, քան որում
խոսական կրիտիկ երբէք չի տեսել, առ էս պատաճա-
ռաս կարծել է, թէ լաւ կրիտիկը էն է, որի մէջ շատ
կծուղական բառեր և յիշացներ կան, և հէնց էդպէս էլ
ինքն է գրել։ Բայց գիցուք, թէ նա մոլի չքաւորով էս
տեսակ առարկայի վրա կրիտիկ գրելու չամար հարկա-
ւորեալ գիտութիւնների և քաղաքակրթութեան պակա-
սութիւններին, ենթարկել է իրա քննութեան տակ «Ոչ-
ցէ՛ » կոմեդիա—էոդեմիլը։ Ինչ հարա քիչ ու շատ կա-
ցիլի է նրան, քան որում էդ չարտուածը տպած է։ Տպած
գրքի վրա ամէն մարդ կարող է բան գրել, և կարդա-
ցողները հիշատ թեամբ կարող են տեսնել կրիտիկի ձրշ-
մարտութիւնը կամ ստութիւնը հաճելիութիւնով գիրքը
կրիտիկի հետ։ Ամէն հարցնենք, թէ ի՞նչ իրաւունքով
նա քննում է «Ոչ էլը դշ-ոոդ, ոչ-ոը էլ» կոմեդիա—
էոդեմիլը, երբ որ էս հատուածը տակաւին տպած չէ։
Ա՛ թէ կրիտիկ գրելու նպատակը էն է, որ ճշմարտութիւնը
յայտնուի և ամէն մարդ կարողանայ անաչառ դատաւոր
դառնալ, ուրեմն չը տպած բանի վրա կրիտիկ գրելը նշա-
նակում է խաղալին խաբել։ բան որում ի՞նչպէս կարող
են կարդացողները դատել, երբ որ աչքի առաջին չունին
գիրքը։ մի՞թէ պէտք է կուրօրէն հաւատան կրիտիկին,
ինչպէս որ նա ցանկանում է։

Բայց պ. Կարինեանցը կարծել է, թէ միայն իրա գրքը բաւական է կարդացողներին հաւատացնելու համար. կարծել է, թէ տակաւին կան մեր ազգի միջումը էնպիսի թանձրամիտներ, որոնք կը հաւատան իրա խօսքին առանց հաստատելու գրքի հետ. մառացել է, թէ կրօնական գրքերը և կարդալու համար առաջին, գլխաւոր և անհրաժեշտ պայմանը էն է, որ ուշքի առաջին դրած ըլլի քննած առարկան։ Եթէ էդ պայմանը չըլլի, էն ժամանակը ամէն մարդ կարող է մեր առնել օրմնու ձեռագիրը, իրա ուզածի չափ ծռտռել բառերը և մարքերը և վերէն կրօնական գրքի, ինչպէս որ արել է իմ կրօնակիցը։ Ի՞նչ պատճառու է պ. Կարինեանցը էդքան պակաս միա համարում մեր կարդացողներին. ընչի՞ է էնքան մոլորում, մինչև որ կարծում է, թէ մեր Աստուածները նրա առածները հաղդ մանեթի կ'առնեն։ Օխ, պ. Կիւրեղեան, հիմի էն ժամանակը չէ, էն ծառերը վաղուց են կտրուել. հիմի ամէնքը ապացոյց և փաստ են պահանջում, և մինչև որ ապած գիրքը չը տեսնեն, կրօնակին չեն հաւատում։

Եւ ի՞նչ հնարքով է ձեռքը գցել պ. Կարինեանցը իմ չը տպած հաստատը։ Այսանդ բան է, որ էդ հնարքը չէր կարող ապնիւ լինել, որովհետև մէկ սրինակից աւելի չը կայ, էն էլ ինձ մօտ է. բայց նա 'ի զուր է էդքան աշխատել ձեռք բերելու համար, բան որում ես ոչինչ թաքցնելու բան չունիմ և էս բոլէնս էլ տալիս եմ և պատրաստ եմ տալու ամէն ցանկացողաց, ուրեմն նրան էլ կը տայի, եթէ ուզողի ինձանից խնդրէր. միայն տալու ժամանակը կը խնդրէի, որ չը փոխէր իմ բառերը և մարքերը։ Բայց նա իրա հնարքը աւելի վայելուչ համարելով, ձեռքն է գցել իմ հաստատը, հարկաւոր և ընտիր տեղերը քաց է թողել, խակատն մարքերը ծռտռել է, աւելացրել է, պակասացրել է, և էնպէս դուրս է գրել իրա գէրհրաշ կրօնակիան։

Օ՜ սրամտասիրություն էս է, որ պ. Կարինեանցը «Պօլիֆոն»
կամերային նվիրակցությունը բազմած էր Լեհաստանի գահ-
ակալելու և ոչ միայն մեծ հրճվանքով ծափահարում էր,
այլև շատ անգամ և շատ ընկերաց Լեհաց մէջ. լիսաբերան
գոչում էր հեղինակաց Լեհերն էլ, կատարում մեն էլ, երգերն
էլ, և բոլոր գործողաց Լեհերը ընդունում էր և քաջա-
զուարթ էր էնուէ՝ և ճշմարիտ: Իսկ այժմ չը գիտեմ ի՞նչ
է պատահել, որ առաջի է, Լեհ ընտիրները դուրս բա-
նեալ լինին է։ «Էնէլ նշանած, մի՝ ոչ հէ՞» կամերային նա-
խակրթաւորեան (ընպիտիսիոնի) ժամանակը նամատակա
նեկաց գտնուեցաւ, շատ զարմանալով ընդ սկզբից մին-
չև վերջը և գոլից բոլոր գործողաց Լեհերը, տատրան-
նները, խոտակցաւորները և երգերը։ Իսկ այժմ, չը գի-
տեմ, Լեհ ի՞նչ պատճառաւ է փոխել իրա միտքը, և
էդպէս քարկոծում է իմ բոլոր գրուածները, ամէն ջան-
քով աշխատում է գտնաղան ծաւռը մեկնաւ Լեհերեր տալ
իմ հատուածներին և իրա խօսքը զօրացնելու համար ա-
սում է, Լեհ հոգևոր իշխանաւ Լեհերն էլ չը կամենան,
որ հին դպրոցի դատարկ գահլիճումը ձեռ իմ սարքած
Լեհատանը։ Պէրջինը միքը ինչ ճշմարիտ է. բայց ոչ
Լեհ հոգևոր իշխանաւ Լեհերը, այլ ուսումնարանի կառա-
վարաւ Լեհերը սրգերից, այլ Լեհ ի՞նչ պատճառաւ, էդ
ինձ յայտնի չէ։ Պիտի էսքանը եզրակացնում եմ, որ
էն կառավարաւ Լեհերը ինքը ներկայ չը գտնուելով ոչ նա-
խակրթաւորեան և ոչ խորհրդաւորեան ժամանակը, և
կարդացած չըլնելով իմ ձեռագիր հատուածը, չը գիտէր
նրա բովանդակաւ Լեհերը, սրանց էր կարող միտքաւոր
ճանաչել և էն պատճառաւ սրգերից։ Իսկ եթէ առանց
վերահասու լինելու սրգերից, սրանց նշանակում է, որ
նրան ծաւռն են հասկացրել։ Էնէկ էս ծաւռը հասկաց-
ողը կարող էր լինել պատճառ սրգերիցուն, մէկ էլ էն
կարծիքը, Լեհ հոգևոր դպրոցի դահլիճումը անելայեր է

Հեռատեսութիւն (մ-ակտարութիւն) խաղալը Բայց հոգի չունի, բան արուած նախն հին գահիկներուն շատ անգամ և շատ տարիներով հեռատես էլ էին, հեռատեսներէ ա-ռելի ասոր գործերը էլ են իրենց, ինչպես զօր, պատերազ, հատարակու հեռից ժողովրդը կայցն, և երկրորդ ինձ տպագրելուց յետոյ պ. Պարոնեանցի գուտարարակու-հեռանքը և գործունեութեանքը նոյն գահիկներուն տար-քուներու, և այժմ կարդալ առանձին հեռատես մեծ բե-մով և գանազան շինուածքով, և հին տեղ քանիցս անգամ կատարելին պատմութեանքն կոլերգուս հեռներ հոգեւոր գարոյցի պրեգիներբ, որոնք պատրաստուած են նկարագ-յուսկան և հոգեորական առաքինութեանքի համար։ Մեկ խոս-քով, ուշ ես և ուշ բոլոր բարեմիտ անձինքը մինչև էս օր էլ չինք հասկանում, թէ ի՞նչ պատճառաւ իմ տար-բուած նպատակին հեռատեսը արգելուեցաւ էն գահիկից և ի՞նչ պատճառաւ պ. Պարոնեանցի գահարանութիւնը և բարեկամութիւնը շատ նկան դէպի պարտաւորք և տանելու։

Դարձեալ մինչև դիտեմ, որ Պ՝ օ՝ խ՝ ա՝ ը չէր, այլ Պ՝ էին դարձած, թէ-որ հին կամ դիտեն էր, որ էդ քարերի քարերից նրան, բան արուած էդ հատուածի նեկիրյացներից յետոյ հէնց մեռա օրը նա ակոց բարձրանալ, և ինքը ժամանակից յետոյ գրել։ Դատելից ես մանրամասնում եմ, թէ կա-բելի է, որ նա կարծիք բնի տարած, թէ էն հատուածի անձանց մէջ տեղա-նամութիւն բնի տեսնում, այլ թէ ամեմ նամութիւնը, էդ մեղմ ինքը գիտէ։

Բայց թողնենք դրանց անոգուտ հետաքրքրութիւնը և տեսնենք, թէ ի՞նչ գեղեցիկ և ճշմարիտ խոսքերով է գրուած պ. Պարոնեանցը ինձ և իմ պատուցին։ (I)

(I) Դա տեսակ խոսքերին պատասխան տալը ես սա-խրատ էին համարում։ Բայց վախենալով՝ թէ չքնի որ մի քանի ընթերցողներ, մանաւանդ տար երկրներում-

Ինձ համար նա ասում է, թէ Ֆիլիզեցուց կեանքին անտեղեակ եմ և յաւելացնում է փիլիսոփայի առածը՝ «առա՛ ինձ՝ ո՞ւմ հետ ես կենցաղավարում, ես քեզ կ'ասեմ ինչպէս մարդ ես։» Սրա բացատրութիւնը շատ պարզ է և ամէնքին յայտնի։ Տան և ուրիշ տարի է, որ ընակւում եմ Ֆիլիզեցումը, ապա ուրեմն անկարելի բան է, որ մէկ քանի տարիի հետ ծանօթութիւն չ'ունենամ, անկարելի բան է, որ էդքան երկար միջոցում լսած չըլնիմ զանազան տեսակին անց.քեր և դիպուածներ։ Այսպիսի տեղեկութիւններ ո՛չ թէ միայն ես, այլև ինքը պ. Կարինեանցն էլ կարող է ունենալ։ Սրանից՝ ո՛չ ես, ո՛չ նա և ո՛չ ոք չի կարող յիշուել տնոր-ղէտի, ըստ որում բոլորովին անտեղեակ կարող է լինել էն մարդը, որ կամ բոլորովին ծանօթ չ'ունի քաղաքումը և ո՛չ ոքի հետ հաղորդակցութիւն չ'ունի, և կամ ո՛չ աչք ունի և ո՛չ ականջ։

Սակայն էդպիսի տեղեկութիւնները միայն Տուոտ-որ կեանքից կարող է օրմին ունենալ, և ո՛չ թէ ընդհանուրից, և էս պատճառաւ ընդհանուր տեղեկութիւն բոլոր Ֆիլիզեցուց կեանքից ո՛չ ես ունիմ, ոչ ինքը պ. Կարինեանցը և ո՛չ թէ ուրիշ մեզ նման մարդիք։ Սրանից ես երբէք չեմ և չէի կարող նկարագրել ընդհանուր կեանք, այլ վերը եմ առել Տէր Տոնի մատնաւոր անձանց տնային կեանքից Տէր Տոնի պատկերները և անց.քեր, ինչպէս որ վերը են առնում բոլոր հեղինակները, որոնք գրում են ներկայ ժամանակներս վերաբերեալ ռօմաններ, վէպ.քեր և թէատրոնական հատուածներ։ Ա. յլ թէ ի՞նչ հոգում պ. Կարինեանցը էդպիսի ծուռը մեկնութիւն է տալիս իմ

կարծիք տանեն, թէ պատասխան չունէի տալու, հարկադրուեցայ գրել էս բացատրութիւնը։

գրուածքին, թէ՛ զ ինչն իրանք ընթերցողները։

Ինչպէս որ ամէն պաշտօնատար Հայրապետութիւն, էն պէս էլ իմ կենցաղավարութիւնը երկու տեսակ է. մէկը՝ պաշտօնական, միւսը՝ փոքրիկոն։ Հայրենի մասին ամէնքին յայտնի է, թէ ի՞նչ կարգի մարդկանց հետ է իմ յարաբերութիւնը. իսկ երկրորդի մասին ես պարտաւոր եմ յայտնել իմ, պ. հարցնողին, թէ իմ ծանօթներից և բարեկամներից մէկն էլ ինքն էր պ. Կարինեանցը, որի հետ երկար ժամանակ ընտանեկան կեանք եմ վարել առէջ երթևեկութիւն և կենցաղավարութիւն ունենալով իրարու հետ տեսել. քան 16 տարի, և միասին թարգմանել ենք իրա տանը երկու մեծամեծ գրուածք՝ «Ինքնէ էջեա» երկու հատոր և «Պաղանէ Ինքնէ էջեաց» երեք հատոր. ինքը ծանօթացրել է ինձ իրա բոլոր սիրելի և մերձաւոր ազգականների և բարեկամների հետ. և իրա խնդրանօքը ես էլ ծանօթացրել եմ նրան իմ բարեկամների հետ, որոնց մէջ, ինչպէս որ ամէն իմ ծանօթներին յայտնի է, չկան ո՛չ բաղնիապանաներ, ո՛չ գիւղացիք, ո՛չ վառնչիք և ո՛չ ուրիշ որոնց նման մարդիք։

Այդ մարդու խիստ արժանաւորութիւնը առհասնելու համար բաւական չէ գիտենալը, թէ նա ում հետ է կենցաղավարում (թէպէտ և փիլիսոփան էդ միջոցը բաւական է համարել, բայց բոլորովին ուրիշ մարքով, որ կարծեմ, պ. Կարինեանցը լաւ չի հասկացել). այլ պէտք է աչքի առաջը ունենալ նրա ներքին և արտաքին յարաբերութիւնները, զոր օրինակ, որտի բարութիւնը կամ չարութիւնը, խելքի շատութիւնը կամ քիչութիւնը, նրա անցած վարքը, գործքերը, և այլն։ Հայտնի նկատելով մի երկուսիս ճանաչողները հեշտ կը վճռեն, թէ ո՞ր աստիճան մօտիկացած է մարդիս թեան ներկայ վիճակին. և թէ պ. Կարինեանցի առաջ բերած գիւղացոյ և քիւրդի առակը ո՞ւմը կը վայելէ, ի՞նձ թէ իրան։ Սրա համար մէկ

լաւ առակ ունի տուած Կիրիլը։

Կատիկը Հայերէնի մէջ տեսաւ իրա կերպարանքը և ասաց իրա մօտ նստած կատուին՝ տէս, տէս, էն ի՞նչ այլանդակ անասուն է։ ։ ։ վայ իմ գլխին։ եթէ ես դրա պէս ապէշ լինէի, Ուստուած վկայ, մէկ օր էլ չէի կենալ աշխարհքումը, կը խեղդուէի։ Կատուն պատասխան տուեց՝ շատ մի՛ նեղանար, քնքրիկ, և՝ ի զուր տեղը մի՛ երդուիր։ էդ այլանդակ անասունը որ տեսնում ես, հէնց ինքդ ես։

Իմ գրած Թէատրոնական հատուածների նպատակը ա։ Կարիներանցը նմանեցնում է էն այլ նպատակին, որ վրացերէն ստանաւորներ գրելով, փոխ էր հաւաքում։ Յ։Խիզիզեցու յայտնի է, որ իմ գրուածքներից ես ոչ Թէ միայն դրամական օգուտ երբէք չեմ ստացել, այլև ինքս էլ մտում եմ Թէատրոնի համար իմ տեղհանումներից։ Սրանից էդ օրինակը ինձ չի յարմարում, և իմ բոլոր գրուածքների մէջ էդպիսի տեղ նպատակ ոչ ոք չի տեսել, և չի տեսնում, բաց՝ ի՛ ա։ Կարիներանցից։ վասն որոյ էնքան բազմաԹեան մէջ մէկի խօսքը (էն էլ էսպէսի խօսքը) հատ փող չարժի և քանի է։ Իսկ եթէ իրա ա։ Կարիներանցի գրուածքները քննենք, պարզ կը տեսնենք ամէն տող փոզաՓՇՈՒԻՆ (ЛЕСТЬ), որով նա աշխատում է մէկ քանի անձանց աչքին լաւ մարդ ձևանալ և նրանցից օգուտ ստանալ։ և առանց կարմրելոյ գովում է նրանց չկայած արժանաւորութիւնները և չ՚արած մեծարգարծութիւնները, մինչև անգամ հրաշագործութիւնէր է նուիրում նրանցից մէկ քանիսին։ Դասական վարքաբերութիւնը, իմ կարծիքով, աւելի մտի՛կ է ծաղրածուԹեան քան Թէ գովասանքի, և աւելի անպատուութիւն է վերաբերում գոված անձանցը, քան Թէ գովասանքը, քանի որում գովելի է միայն իսկական արժանաւորութիւնը և մեծարգարծութիւնը։ Կարիներանցի վրացերէն ստանաւոր գրողը՝ այլ նպատակով, միայն ուրիշ Ճանապարհով, ինքը

պ. Կարինեանցն է վարում իրա գշուածքների մէջ, կարծելով, թէ իրա արածը ո՛չ ոք չի տեսնում և չի հասկանում։

Օ՜ արմանում է, թէ ունայն թէատրոնի տոմսակի վրա ես սարդրել եմ դէրէ-հօր կոչմամը, և փողոցի խոսակցութիւն մէջ բերելով, ասում է, իբրու թէ ես երկար ժամանակ ինապէկտորութեան էի ցանկանում, չը հասայ էդ նպատակին, հիմի էսպես եմ մխիթարում։

Ես խոսքերին ես չէի կամենում պատասխան տալ, քանի որում պատասխանի արժանի չեն հեռևեալ պատճառու։ Նախ՝ առ պ. Կարինեանցը փողոցի խոսակցութիւն է մէջ բերել, ով գիտէ ումից լսած, ուրեմն էդպիսի խոսակցութեան պատասխան տալն էլ ամօթ է. քանզի ինչքան ինձ յայտնի է, Թիֆլիզեցոց մէջ էնպիսի տուտուց մարդիկ չը կան, որ չիմանան էդ տեսակ դիրեկտորի նշանակութիւնը. ուրեմն հաստատ կարելի է մակաբերել, թէ էդ խոսակցութիւնը պ. Կարինեանցը ո՛չ ոքից չի լսել, այլ ինքն է տեղծել — միայն էն նպատակաւ՝ որ ցոյց տայ, իբրու թէ ես ցանկացել եմ ինապեկտորութեան, որ քանի ամենայնի տուտ է. իսկ եթէ ճշմարիտ էլ լինի, ես կարծեմ որ ոչինչ յանցանք չ'ունի, քանի որում ոչ էլ ցանկանում լաւ պաշտօն ունենալու։ Ես տեսակ խոսքերին, կրկնում եմ, ես չէի կամենում պատասխան տալ, քայց վախենալով, թէ չըլինի, որ ուրիշ երկրներումը հասատան էդ խոսքերին, յանձն առի բացատրել դիրեկտոր տարդրելուս պատճառը։

Օ՜ դուշմանալով, որ չըլինի, թէ ոբմին շինովնի տոմսակով ներս մտնի թէատրոնի դահլիճը և նեղացնի խսկիրան տոմսակ ունեցողին, ես փոխանակ նշանակի կամ ինքս տարդրեցայ դիրեկտոր։ Ես տեսակ ունիմս և չունին տարդրուելուս համար պ. Կարինեանցը երկար երկար խոսքերով ձանձրացրել է կարգացողներին և ինձ

անուանում է քնդակիչ. բայց երբ լրիվ, թէ ողորմելին չէ հասկանում դէրբէիտոչ բառի նշանակութիւնը, և էս սրատ- Հառաւ ես հարկաւոր եմ համարում հասկացնել նրան, թէ դէրբէիտոչ նշանակում է խոտոնջիչ, խորփոտրուոչ։ Էս հրաւիրել եմ նարածին թէատրոնի համար երիտասարդ դերասանները, կարդացրում եմ և կատակարում եմ քեմը, ասելիս դէրբեկոտոր եմ էն թէատրոնի. էդ տեղ ի՞նչ կայ զարմանալու։ Դէպքի դէրբեկոտորին ոչ ոք չի ընտրում. էդ ալքոնի պաշտօն չէ. խակ եթէ ա. Կարինեանցը իրաւունք է պահանջում, ես յայտնում եմ իրան, թէ ես հէնց էն իրաւունքով եմ կոչում դէրբեկոտոր, ինչ իրաւունքով որ ինքը կոչում է վորթոպէտ, և շատ անգամ էլ ռաֆ վորթոպէտ, ըստ որում էդ պատուանունները նրան ոչ ոք չի տուել։ Էս պոյմանների համար ամէն ինչարդար էլ իրա ինչարում դէրբեկոտոր է, ինչպէս գէջ, բանէիանների, նաւթի, խոտի, փոռների ինչարդարները դէրբեկոտոր են. քիստ. բանների, ջամադարների, փոռնչների և մշակների վրա. և ոչ ոք նրանց չի անուանում ինքնակոչ։ Ասելիս ինչի՞ է զարմանում ա. Կարինեանցը իմ ատրադրութեանս վրա։ Այդ նրան նեղելի է, ըստ որում էս բառը օտարազգի բառ է, էն պատճառաւ նրա աչքում շատ մեծ արատ է երևցել և էնդուր համար արժանի չի համարում ինձ էդ պատուանունը։ Ասելիս թող էդ էլ իրանը ընի, Աստուած բարի վայելուշն տայ։

Պ. Կարինեանցը իմ դրուածքները անուանում է հրէշ և այլանդակ հրէշ, և ապացոյց է բերում, թէ ամէն բնութիւնից դուրս բանը հրէշ է։ Շատ լաւ խօսք է . . . Դպիրի կարծ և ազդու ատուգաբանութիւնը պէտք է մեծ մեծ ատուերով դրել մէկ արձանի վրա, որ ամէնքը տեսան անզիր։ Ասան որոյ ես էլ էդ ատուգաբանութիւնից հանում եմ հետևեալ եզրակացութիւն։ Բնութիւնը ունի իրա համար մշանջնական կանոններ, իսկ

եթէ մէկ բան կանոններից դուրս է, ասենք (պ. Կարի-
նեանցի առաջարկութեամբ) հրչ է. զի Հնութեան
կանոն է, որ ազամարդոյ դլուխը պէտք է ունենայ կի-
սաբոլորակաձև դագաթն. իսկ եթէ մէկ մարդու դագաթն
լինի շատ երկայնաձև, և բաց յայնմանէ դագաթան վրա
ունենայ դէպի շինքակողմը մէկ ուրիշ դագաթնաձև յա-
ւելուած, էնպէս որ ուշ մէկ դարձուցանումը շինած դատակ
չը յարմարուի դլխին, ասենք էն դլուխն է հրչէշ, բայց որում
քնութեան կանոնից դուրս է։ Եթէ պ. Կարինեանցի
առաջ առաջարկութիւնը հիմնաւոր է, ասենք էս իմ
առածն էլ Հնարիւր է։

Այլ իմ կարծիքով դրականութեան մէջ հրչէշ չի կա-
րող ընել, այլ կարող են պատահել պէտք, անիծուն, ան-
էրբեիոյ, անցորդաբ, իտալիա և այլ զանազան տեսակ պա-
կասութիւններ ունեցող շարադրութիւնք։ Եթէ պ. Կա-
րինեանցը էդ տեսակ պակասութիւններից մէկին ու մէկը
տեսել է իմ հատուածների մէջ, կարող էր ապացոյց-
ներով և փաստերով հատուցանել իրա տեսածը և էդ ա-
նուաններից մէկին ու մէկը ընծայել նրան։ Իսկ հրչէշ ան-
ուանելով՝ ցոյց է տուել թէ չի հասկանում էդ բառի
նշանակութիւնը։ Հրչէշ չի նշանակում էն բանը, ինչ ան-
քնութիւնից դուրս է, այլ կոչում են էնպիսի արարած-
ները, որոնք իրանց շարժմանց մեծութեամբը, դարձու-
ցիչի կազմութեամբը և ձևովը ստիպում են մարդուս,
բայց որում շատ հազուադիւտ են և մարդուս աչքը տալիս
չէ նրանց տեսնելու։ Այս կանոնով հրչէշ կոչուածներն ը-
նէնոնը, սիկիտուսի մէջ գտնուող Ինիխոյի հեռատեսը,
Էշտոլը, հին ժամանակուայ Տուռնոյը և այլն։

Մարդկութեան մէջ էլ պատահել են էնպիսի անձինք,
որք իրանց անպատմելի շարադրութեանց համար ստա-
ցան հրչէշ անունը. զի՝ Նիրոն, Կալիգուլա, Հելիոգաբա-
լոսների շատերը և մանաւանդ Ներոնը։ Այնչափ դարձ-

քերը լաւ նկարագրուած են «Մոփսուէստիոն Էրէսոյ» անուանեալ գրքումը, որ ծանօթ է մեր ընթերցողներից շատերին։

Ա. Յետ սոնոնում ենք, որ եղեռն ալ. Կարինեանցը հաստատում ընդէր էս նշանաւորութիւնը, իւր գրուածքներին չէր ընծայել հրէշ անունը. իսկ նրա առաջ առաջարկութիւնից երևում է, որ նա անտարբեր է հաստատում հրէշ և քնարանման հանուն գրագրական արտարուածները. Ինչպէս որոշ ես խորհուրդ եմ տալի նրան բաց անել, լծարգմանել տալ արմատ Պատաց Ա. կոդեքսական բառարանումը чудов: ще և уродъ բառերը, լաւ հասկանալ նրանց ստուգաբանութիւնը և յետոյ ուսանել նրանց գործածութեան տեղերը։

Երբեմն ալ. Կարինեանցը լքցնելով իւր գրուածքը զանազան հայհոյութիւններով, անունը դրել է Իրիոֆիոն գնոսիկոն. (1) բայց ընթերցողները տեսան, որ էդ գրուածքը ոչ կրիտիկ է, ոչ պոլեմիկ և ոչ ուրիշ գրականական աշխատութիւն, այլ մէկ անանուն, անհիմն, անապատոյց յիշատակութիւն, կամ լաւ ես ասել ալ. Կարինեանցի իւր խօսքով, նորոյնքա հրէշ է, որի մէջ ամէն շարքումը գիտցում է ինձ զանազան անվայելուչ խօսքերով և մտքերով, որոնք ես լրութեամբ վերադարձնում եմ իրան. բայց որում գէօրէ_ռէօղ, գէէշմադ ախցոյ՝ նոյ սահմանքնէ գէր, վատ խօսքը և գալը վողը տիրոջն է։

Ա. յլ թէ ի՞նչ հարկից ստիպուած լքցրել է նա իւրա գրուածքը էնպիսի կոպիտ գաղտղութիւններով և անվայելուչ խօսքերով, գրա պատասխանը հեռաւոր առաջից կարելի է մակաբերել։

Մէկ օր կարիճը խայթեց գառնին։ Խեղճ գառնը շուռ եկաւ և հարցրուց՝ ի՞նչ ինչաս էր տուել .քեզ, որ ինձ խայթեցիր։

---

(1) Մեղու Հայաստանի. 1860 թ. հ. 11. երես 87.

— Եվ եկ զիսեմ, պատասխանեց կարիքը, որ ոչինչ վնաս չես տուել ինձ, բայց իմ ոչ անեմ . . . Բանակիցն գրոցն է։

Ուղղագրութիւն։

Երես։	Սուտ գրեալ	Ուղիղ գրեալ
4 —	[illegible]	[illegible]
5 —	[illegible]	[illegible]
6 —	բաւականանում չեմ	բաւականանում եմ
18 —	[illegible]	[illegible]
19 —	[illegible]	[illegible]
24 —	[illegible]	[illegible]
131 —	[illegible]	[illegible]